



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 2017Թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ե Ր Ե Վ Ա Ն - 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՀՀ սփյուռքի նախարարություն	3
2. ՀՀ արտաքին գործերի նախարարություն	52
3. ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	165
4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն	166
5. ՀՀ մշակույթի նախարարություն	167
6. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	168
7. ՀՀ արդարադատության նախարարություն	169
8. ՀՀ առողջապահության նախարարություն	169
9. ՀՀ պաշտպանության նախարարություն	175
10. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	175
11. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	176
12. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	177
13. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	177
14. ՀՀ ոստիկանություն	179
15. ՀՀ մարզեր	179
16. Երևանի քաղաքապետարան	188

1. ՀՀ սփյուռքի նախարարության 2017 թվականի գործունեության ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2017 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության աշխատանքները իրականացվել են հիմք ընդունելով ՀՀ Նախագահի հրամանագիրը, ելույթներում, զեկույցում բարձրացված հարցադրումները կապված Հայրենիք-Սփյուռք գործակցության հետ, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060 - Ա «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր» և ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագիր», ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12 -ի N 122 - Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշումները:

ՀՀ սփյուռքի նախարարությունը առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 14 -ի N 131 - Ն որոշման N 2 հավելվածի 89-94 կետերով իրականացրել է հետևյալ գերակա խնդիրները

- 1. Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում,**
- 2. Հայապահպանության համար և ուժացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում,**
- 3. Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի մասնակցության ապահովման գործուն մեխանիզմների ներդրում,**
- 4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության ամրապնդմանն աջակցություն,**
- 5. «Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» շարժման ձևավորում և զարգացում,**
- 6. Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում և մասնագիտական ներուժի օգտագործում՝ Հայաստանի և Արցախի տնտեսության զարգացման համար**

Հիմնվելով գերակա խնդիրների վրա 2017 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում

Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի՝ Հայաստանի հասարակությանն ինտեգրումն արագացնելու ուղղությամբ 2017 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Գումարվել են ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի N9-Ա որոշմամբ ստեղծված՝ Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 5 նիստ, որոնց ընթացքում ներկայացվել է ավելի քան 20 զեկուցում: Կատարված աշխատանքների մասին հաղորդումներով հանդես են եկել ինչպես պետական, այնպես էլ միջազգային և հասարակական-բարեգործական կառույցների ներկայացուցիչներ: Հսկողություն է սահմանվել նիստերի ժամանակ բարձրացված հարցերի ժամանակին կարգավորման նկատմամբ:

2. Մշակվել և շահագրգիռ կառույցներին է ուղարկվել «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարության» նախագիծը: Այժմ հավաքվում են նրանց առաջարկությունները և դիտողությունները:

3. Փետրվարին ՀՀ Նախագահի հանձնարարությամբ մոտ 40 տոննա մարդասիրական բեռ՝ 2 ռուսական օդանավով տեղափոխվել է Սիրիա, որին ուղեկցել է նաև նախարարության վարչության պետ: Բեռն ամբողջությամբ բաժանվել է տեղի բնակչությանը, այդ թվում՝ հալեպահայությանը:

4. Փետրվարի 9-10-ը ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Հայաստանում ներդրումներին սփյուռքահայերի մասնակցությունը» և «Զբոսաշրջության զարգացումը Հայրենիքում և սփյուռքահայերի մասնակցությունը...» կլոր-սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են Հայաստանում հաստատված շուրջ 30 սիրիահայ և իրաքահայ գործարարներ:

5. Մարտի 1-2-ը «Կանանց ձեռներեցության խթանման և զարգացման կենտրոն» և «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունները Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպել են Կանանց ձեռներեցության ցուցահանդես, որին մասնակցել են սիրիահայ 46 կին ձեռներեցուներ և ձեռագործ վարպետներ:

6. Մարտի-դեկտեմբեր ամիսներին ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական

կազմակերպությունը տարբեր առիթներով 4 անգամ կազմակերպել է «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը Երևանում /60-ից ավելի ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:

7. Մարտի 10-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Կանանց միջազգային օրվա առթիվ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում իրականացրել են «Մայր իմ անուշ...» խորագրով համերգը՝ սիրիահայ և իրաքահայ շնորհալի երեխաների մասնակցությամբ:

8. Մարտին «Իզմիրյան» բժշկական կենտրոնում «Իզմիրյան հիմնադրամի» նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի մեկնարկի և Համագործակցության հուշագրի ստորագրման արարողությունը: Ծրագիրը համաֆինանսավորվում է «Իզմիրյան» հիմնադրամի կողմից՝ 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից՝ 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, և Իզմիրյան բժշկական կենտրոնի կողմից, որն իր հերթին ապահովելու է մինչև 45% զեղչ՝ բժշկական կենտրոնի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունների համար: Գործընկեր կառույցներն են ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀԲԸՄ հայաստանյան ներկայացուցչությունը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» կազմակերպությունները:

9. Մարտի 27-ին ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում կազմակերպվել է Հայաստան տեղափոխված 600-ից ավելի սիրիահայերի հանդիպումը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

10. Մարտի 29-ին Երևանի պատմության թանգարանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից կազմակերպվել է «ՎԵՐՍԿԻՊ. սիրիահայերի հաջողություններն ու ավանդը Հայաստանի ձեռնարկատիրության ոլորտում» գրքի շնորհանդեսը և համանուն լուսանկարների ցուցահանդեսը:

11. Ապրիլի 22-ին սիրիահայ բժիշկները Հաղարծին վանական համալիրի տարածքում մասնակցել են «Armenian Tree Project»-ի հետ համատեղ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված ծառատունկին:

12. Ապրիլի 23-ին սիրիահայ 30 երիտասարդները մասնակցել են դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր կազմակերպված ավանդական ջահերով երթին:

13. Ապրիլի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Սփյուռքի զորակցությամբ» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են նաև սիրիահայ և իրաքահայ գործարարները:

14. Մայիսի 5-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում կազմակերպել է Հայաստանում արդյունաբերության ոլորտում սփյուռքահայ ներդրողների արտադրանքների ցուցահանդես-վաճառք, որին մասնակցել են սիրիահայ 16 գործարարներ:

15. Մայիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում իրականացրել են «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառք՝ սիրիահայ 75 ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ:

16. Հունիսի 2-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել է սիրիահայ 20 երեխաների այցը Երևանի կենդանաբանական այգի:

17. Հունիս-օգոստոս ամիսներին 47 սիրիահայ երեխաներ մասնակցել են Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի առաջին փուլին: Եվս 134 սիրիահայ երեխաներ հանգստացել են Երկրապահ կամավորական միության, Հայ օգնության ֆոնդի, Հայ Ավետարանչական ընկերակցության կազմակերպած և Վահագնաձոր գյուղի «Գուգարք» ամառային ճամբարներում:

18. Հուլիսին տպագրվել է «Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկը»՝ Սիրիայից և այլ հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար՝ ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության և ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

19. Օգոստոսի համապատասխան որոշմամբ ՀՀ կառավարությունը, ՀՀ սփյուռքի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների միջնորդությամբ, «Սիրիահայերի միություն» ՀԿ-ին 5 տարի ժամկետով անհատույց օգտագործման է տրամադրել Կոմիտասի 49/3 հասցեում գտնվող շենքի 2-րդ մասնաշենքի 860.5 քառ. մետր մակերեսով նկուղային և 1-ին հարկի 649.2 քառ. մետր մակերեսով տարածքները՝ գործարար ծրագիր իրականացնելու նպատակով:

20. Սեպտեմբերի 18-20-ը կայացած «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի թեմատիկ 4-րդ՝ «Հայապահպանության հիմնախնդիրները» ուղղության նիստերից մեկը նվիրված էր «Արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի հիմնախնդիրներին», որի ժամանակ հիմնականում անդրադարձ է կատարվել սիրիահայության առկա հիմնախնդիրներին:

21. Սեպտեմբերի 20-ին նախարարությունը ՀՀ արտաքին գործերի նախարարության և ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության հետ համագործակցությամբ կազմակերպել է Սիրիայի հայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև Հայաստանում հաստատված մի շարք սիրիացիների հանդիպումը ԱՄՆ-ի կոնգրեսականների հետ:

22. Դեկտեմբերի 6-7-ը ՄԱԿ ՓԳՀ Հարավային Կովկասում տարածաշրջանային ներկայացուցչության կողմից Թբիլիսիում կազմակերպված բարեգործական ցուցահանդես-վաճառքին ՀՀ սփյուռքի նախարարության և ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մասնակցել են սիրիահայ 9 կին ձեռագործ վարպետներ:

23. Դեկտեմբերի 25-ին սիրիահայ 100 երեխաներ նախարարության աշխատակիցների ուղեկցությամբ ՀՀ Նախագահի նստավայրում մասնակցել են Ամանորի տոնական միջոցառմանը:

24. Դեկտեմբերի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀԲԸՄ Վահե Կարապետյան կենտրոնում՝ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և ՀԲԸՄ-ի հետ համատեղ կազմակերպվել է ամանորյա հանդիպում սիրիահայ երեխաների հետ, որի ժամանակ շուրջ 100 սիրիահայ փոքրիկների (իսկ միջոցառումից հետո ևս 374 սիրիահայ երեխայի) տրամադրվել են տոնական նվերներ:

25. ՀՀ սփյուռքի նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականին Հայաստան է ժամանել շուրջ 170 սիրիահայ: Նախարարություն են դիմել 1262 սիրիահայեր, ովքեր ունեցել են տարբեր ոլորտներին առնչվող 1300 խնդիրներ, որոնցից 722-ը՝ բժշկական օգնության, 97-ը՝ աշխատանքի տեղավորման, 156-ը՝ բնակվարձի փոխհատուցման, 134-ը՝ իրավական/փաստաթղթային, 56-ը՝ կրթական, 125-ը՝ այլ հարցերի վերաբերյալ: Խնդիրների լուծման նպատակով ուղարկվել են համապատասխան գրություններ պետական գերատեսչություններին և գործընկեր միջազգային ու հասարակական կազմակերպություններին:

26. ՀՀ սփյուռքի նախարարը սիրիահայերի աջակցության հիմնահարցերով հանդիպումներ է ունեցել.

- ✓ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի (UNHCR) պատվիրակության ներկայացուցիչների հետ,
- ✓ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հայաստանյան ներկայացուցչության պատվիրակության հետ,
- ✓ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ,
- ✓ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLY) հայաստանյան ներկայացուցչության պատվիրակության հետ,
- ✓ ԱՄՆ խորհրդարանական պատվիրակության հետ,
- ✓ ՀՀ-ում ԱՄԷ-ի դեսպանի հետ,

- ✓ ՀԲԸՄ ղեկավարության հետ
- ✓ Գյուլբենկյան հիմնարկության ղեկավարության և այլ բարեգործական կառույցների, անհատ բարերարների հետ:

27. ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության համաֆինանսավորմամբ փոխհատուցվել է ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ 455 ուսանողների 2016-2017 ուսումնական տարվա ուսման վարձավճարների 70 տոկոսը:

28. Հայ օգնության ֆոնդի աջակցությամբ ֆինանսավորվել է ծայրահեղ կարիքավոր սիրիահայ 31 ուսանողների ուսման վարձավճարների 30 տոկոսը:

29. ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1439-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների 2017-2018 ուսումնական տարվա ուսման վարձավճարների ՀՀ կառավարության կողմից փոխհատուցման չափը՝ 20 մլն դրամ: Ըստ այդմ, 2017-2018թթ. ուսումնական տարվա սիրիահայ 441 ուսանողների ուսման վարձավճարների 60%-ը կփոխհատուցվի ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության, «Սուրբ Սարգիս» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

30. ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակել է համագործակցել սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող պետական մարմինների, համահայկական, միջազգային կազմակերպությունների և հոգևոր կառույցների հետ՝ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ միասին համակարգելով այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի բաղադրիչների, ինչպես նաև շահառուների ընտրությունը:

31. «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ից բացի ՀՀ սփյուռքի նախարարությունը շարունակում է համագործակցությունը նաև սիրիահայերի կողմից Հայաստանում ստեղծված այլ՝ «Հալեպ» հայրենակցական բարեսիրական, «Քեսաբ» հայրենակցական միավորում, «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունների հետ:

32. Իր գործունեությունն է շարունակել նաև 2016թ. դեկտեմբերից ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում գտնվող՝ «Կլաուդիա Նազարյան» բժշկական կենտրոնը, որտեղ սիրիահայերը ստանում են անվճար բժշկական խորհրդատվություն՝ բժշկական կենտրոնում աշխատող սիրիահայ կամավոր բժիշկների կողմից:

33. Շարունակվել են Հայաստան տեղափոխված սիրիահայերի և իրաքահայերի համար «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական ՀԿ-ի կողմից ատամնաբուժական և ակնաբուժական անվճար ծառայությունների մատուցման աշխատանքները:

2. Հայապահպանության համար և ուժացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում

2.1 «Սփյուռք» ամառային դպրոց



Սփյուռքի հայ համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու զորացմանը, երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի, հայկական կրթօջախների ուսուցիչների, կրթական գործի պատասխանատուների, ազգային երգ ու պարի խմբերի ղեկավարների որակավորման բարձրացմանը, Սփյուռքի ԶԼՄ-ների, երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպմանն աջակցելու նպատակով 2012 թվականից կազմակերպվում է «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագիրը: «Սփյուռք» ամառային դպրոց» 2017 թվականի ծրագիրը հաստատվել է ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով:

Ծրագիրն իրականացվել է Երևանի պետական համալսարանի հետ համատեղ 5 ուղղություններով՝

- Հայոց լեզվի արագացված ուսուցում (հուլիսի 2 - 29),
- Հայոց լեզվի ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում (հուլիսի 2 - 29),
- Երիտասարդ լրագրողների վերապատրաստում (հուլիսի 2 - 15),
- Ազգային երգի խմբավարների և պարուսույցների վարպետության դասընթացներ (հուլիսի 2 - 15),
- Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների դասընթաց (հուլիսի 2 - 15):

Ամառային դպրոցին մասնակցել է 266 սփյուռքահայ աշխարհի 30 երկրից, ընդ որում՝ Հայոց լեզվի արագացված ուսուցում - 118, Հայոց լեզվի ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում - 58, Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների - 35, Ազգային երգի խմբավարների և պարուսույցների վարպետության դասընթացներ - 38, Երիտասարդ լրագրողների վերապատրաստում - 17:

Դասավանդման գործընթացում ներգրավվել են ԵՊՀ և այլ բուհերից, ինչպես նաև Սփյուռքից հրավիրված մասնագետներ և մշակութային ճանաչված գործիչներ:

Բոլոր ուղղություններում ուսուցանվել է ազգային երգ ու պար:

Ծրագրի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի, ՀՀ Նախագահի ռեֆերենտ Հովհաննես Նիկողոսյանի, ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի, հանրապետության ականավոր մշակութային հեղինակավոր գործիչների հետ:

«Սփյուռք» ամառային դպրոցի բոլոր մասնակիցների համար կազմակերպվել են շրջագայություններ Հայաստանի պատմամշակութային վայրերով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գառնի, Գեղարդ և այլն), այցելություններ դպրոցներ, մանկապարտեզ, կրթամշակութային և նորարարական հաստատություններ («Թումո» կենտրոն), լրատվամիջոցներ, հեռուստաընկերություններ:

2.2 «Արի տուն» ծրագիր



ՀՀ կառավարության N 4 արձանագրային որոշմամբ 2017 թվականի փետրվարի 2-ին հաստատվել է Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը:

Ծրագիրն իրականացվել է հունիս-օգոստոս ամիսների ընթացքում՝ 8 փուլերով, որոնց մասնակցել է 990 սփյուռքահայ պատանի ու աղջիկ՝ աշխարհի 36 երկրից: Ապրիլին կայացած հատուկ փուլին մասնակցել են Ֆրանսիայի Ալֆորվիլի «Ս. Մեսրոպ-Արապեան», Փարիզի «Դպրոցասեր» և Մարսելի «Համազգային» վարժարանների 66 աշակերտներ՝ 10 ուսուցիչների ուղեկցությամբ:

Ծրագրի մասնակիցները, ինչպես ամեն տարի, այցելել են Հայաստանի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, Երևանի կենդանաբանական այգի, ԲՈՒՀ-եր, ՀԲԸՄ վիրտուալ համալսարան և այլն:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հայոց լեզվի 5-օրյա արագացված դասընթացներ՝ Երևանի Ե. Չարենցի անվան թիվ 67 դպրոցում: Դասընթացներն անցկացվել են մասնակիցների լեզվական իմացության մակարդակին համապատասխան ձևավորված խմբերով: Դասերն անցկացվել են երևանյան դպրոցների հայերենի լավագույն ուսուցիչներն ու մասնագետները, ինչպես նաև՝ Սփյուռքի հայկական կրթօջախների փորձառու ուսուցիչները: Հայոց լեզվի և հայրենագիտության դասընթաց է կազմակերպվել նաև ծրագրի ճամբարային 4 օրերի ընթացքում:

2.3 Ուսուցիչների վերապատրաստում Սփյուռքում

ԱՄՆ Արևմտյան ափում գործող կրթական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման նպատակով հունվարին 15 օրով ԱՄՆ է գործուղվել դասախոս: Գործուղման ընթացքում վերապատրաստվել է 27 դպրոցի հայոց լեզվի և հայագիտական առարկաների 50 ուսուցիչ:

2.4 Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ

Փետրվարի 18-24-ը հայտարարվել է մայրենիի շաբաթ և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Աջակցություն է ցուցաբերվել Գրքի երևանյան 13-րդ ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպմանը: Ցուցահանդեսին ներկայացվել են նաև նախարարության կողմից հրատարակված 90 գրքեր:
- ՀՀ ԳԱԱ-ի Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանի աջակցությամբ կազմակերպվել է «Հայոց լեզուն դպրոցական դասագրքերում» կլոր-սեղան քննարկումը,
- «Լեզվի նշանակությունը և նրա՝ որպես ռազմավարական գործիքի վտանգվածության խնդիրները, լուծման ուղիները» թեմայով ստեղծվել է ֆիլմ և առաքվել սփյուռքյան համայնքներին: Ստեղծվել է գովազդային նյութ:
- Իրականացվել է այցելություն Օշական՝ Մեսրոպ Մաշտոցի շիրիմին և եկեղեցուն կից դպրատանը կայացել է Մայրենիին նվիրված միջոցառում:
- Իրականացվել է այցելություն Երևանի Մատենադարան
- Կազմակերպվել է արևմտահայերեն «Հայկաշխարհ» մանկապատանեկան կայքի շնորհանդես:
- Սփյուռքի դպրոցներում իրականացվել է «Իմ քաղցր լեզու» խորագրով շարադրությունների մրցույթ: Մրցույթին մասնակցել են աշխարհի 20 երկրի սփյուռքյան շուրջ 100 դպրոցների աշակերտներ, որոնք ներկայացրել են շուրջ 1000 շարադրություններ, դրանք տպագրվել են նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում:
- Կազմակերպվել է եգիպտոսի մտավորական Ռիհամ Աֆիֆիի՝ Հայաստանին նվիրված «Լեզենդների աշխարհում» պատկերագրքի շնորհանդեսը:
- Կազմակերպվել են գրական ընթերցումներ (արևմտահայերենով) Հայաստանում սփյուռքահայ բանաստեղծների անունները կրող դպրոցներում, ինչպես նաև սփյուռքի կրթօջախներում՝ արևելահայ հեղինակների ստեղծագործություններից:
- Կազմակերպվել է Հայաստան-Լիբանան տեսաժողով՝ «Արևմտահայերենի վտանգվածությունը և պետական լեզվաքաղաքական խնդիրները» թեմայով.

մասնակցել են լեզվաբաններ, ուսուցիչներ, մտավորականներ: Ստորագրվել է 12 պայմանագիր:

2.5 Համահայկական մրցանակաբաշխության կազմակերպում

Ամփոփվել են Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ իրականացվող «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար-2016» մրցանակաբաշխության արդյունքները: Մրցույթներին մասնակցել են 197 անհատ և կազմակերպություն՝ աշխարհի 24 երկրից, որից մրցանակների և խրախուսական դիպլոմի են արժանացել 177 անհատ և կազմակերպություն՝ մրցանակակիր է դարձել 68-ը, 109 անհատ և կազմակերպություն ստացել են խրախուսական դիպլոմներ:

Հաստատվել են 2017 թվականի մրցանակաբաշխության անվանակարգերը և պայմանները՝

- «Մայրենիի պաշտպան» (անհատներ),
- «Լավագույն հայկական կրթօջախ»,
- «Երիտասարդական կամ ուսանողական կազմակերպություն» անվանակարգերը,
- «Ազատ Արցախ» մանկապատանեկան լավագույն ստեղծագործությունների մրցույթը (նկար, քանդակ (քնօրինակ, էսքիզ կամ լուսանկար), երգ, բանաստեղծություն, պատմվածք, շարադրություն, էսսե և այլն):

Ստացվել են ավելի քան 160 անհատի և կազմակերպության հայտեր մոտ 20 երկրներից: Արդյունքները կամփոփվեն 2018 թվականի սկզբին:

2.6 Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում

ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է Սփյուռքի կրթական հաստատություններին ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակման և տրամադրման ծրագիրը: Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի մշակման և տրամադրման ծրագրին համապատասխան 18 հրատարակչություններից գնվել է մոտ 53.000 կտոր այբբենարան, մայրենի լեզվի, գրականության, պատմության դասագրքեր՝ իրենց աշխատանքային տետրերով, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ նյութեր, նախադպրոցական և մանկական գրականություն, ուսումնական խաղեր, էլեկտրոնային ժամանակակից CD-ներ և DVD-ներ:

2017 թվականին Սփյուռքի 200 կրթօջախի 37 երկրից տրամադրվել է մոտ 87.000 կտոր ուսումնական նյութ, որն համայնքներ առաքվել է փոստով կամ նրանց

ներկայացուցիչների միջոցով: Նախարարության պատվերով հրատարակված գրքերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են նաև էլեկտրոնային գրադարանում:

Բացի ուսումնական նյութերից՝ տարվա ընթացքում սփյուռքյան կառույցներին, հայաստանյան կազմակերպություններին ու անհատներին տրամադրվել են նախարարության պատվերով հրատարակված, նվիրաբերված և հավաքագրված գիտահանրամատչելի գրքեր, ձայնասկավառակ ու խտասալիկ, ՀՀ պետական խորհրդանշանների փաթեթներ, ամենատարբեր հրատարակչական նյութեր՝ մոտ 12.000 կտոր:

2.7 Սփյուռքյան նոր դպրոցների ստեղծում

Սփյուռքի հայկական կառույցների ղեկավարների հետ համատեղ աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում և մշտապես աջակցություն ցուցաբերվում Սփյուռքում մեկօրյա դպրոցների ստեղծմանը: Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 16 նոր մեկօրյա դպրոց Ռուսաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Սերբիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում և Իրաքում: Նորաստեղծ դպրոցներին տրամադրվում են դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ և դիդակտիկ նյութեր: 2017 թվականի նորաբաց մեկօրյա դպրոցների 7 ուսուցիչներ մասնակցել են «Սփյուռք» ամառային դպրոցի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:

2.8 AVC վիրտուալ համալսարան



Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ծրագրերում կարևորվում է ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի գործունեությունը՝ որպես օնլայն-հեռավար կրթության վերջին զարգացումները կրող լեզվուսուցման կայուն կենտրոն:

Հեռավար այս համալսարանի միջոցով իրականացվում են հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) և մշակութային

կրթության ուսումնական ծրագրեր՝ տարվա մեջ 4 ենթաշրջաններով: AVC վիրտուալ համալսարանի ուսուցման ենթաշրջանների մասին տեղեկատվություններն առաքվել են Սփյուռքի համայնքային, կրթամշակութային, երիտասարդական կազմակերպություններին, տեղադրվել ՀՀ սփյուռքի նախարարության կայքերում:

2.9 «Քույր դպրոցներ» ծրագիր

Սփյուռքի դպրոցների գործունեությանն աջակցության նպատակով իրականացվող «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2009 թվականից սկսած

համագործակցություն է հաստատվել 50 հայաստանյան և սփյուռքյան կրթօջախների միջև, ըստ որի պայմաններ են ստեղծվում ուսումնամեթոդական, կրթական-մշակութային, ուսուցիչների միջև փորձի փոխանակման, մայրենի լեզվի պահպանման և տարածման, երիտասարդ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության խնդիրների լուծմանն աջակցության համատեղ ծրագրերի, միջոցառումների իրականացման համար: Ծրագիրը շարունակվել է. այս տարի համագործակցություն է հաստատվել հայաստանյան և սփյուռքյան 6-ական դպրոցների միջև:

3. Հայաստանի Հանրապետության ներդրումային ծրագրերին սփյուռքահայերի մասնակցության ապահովման գործուն մեխանիզմների ներդրում

1. Նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ սփյուռքահայերին խորհրդատվական ծառայություններ տրամադրելու, բիզնես ծրագրեր առաջարկելու, ներդրումների սահուն իրականացմանն օգնելու համար՝ «Մեկ պատուհան» կառուցակարգը:

2. ՀՀ ներդրումներին առնչվող օրենսդրության մասին համապարփակ բանկի ստեղծման նպատակով հավաքվել են համապատասխան նյութեր (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Սփյուռքահայ հնարավոր ներդրողների բանկի ստեղծման նպատակով հավաքվում են ՀՀ-ում գործող սփյուռքահայ բիզնեսմենների տվյալները:

3. ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժին, որտեղ ներկայացված են Հայաստանում ներդրումների մասին, ինչպես նաև հարկային և մաքսային օրենսդրությունները, Հայաստանում ներդրումներին առնչվող արտոնությունները, ներդրումային քաղաքականությունն առնչվող նյութեր և բիզնես ծրագրեր: Բաժնում տեղադրվում են նաև ՀՀ տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացված ներդրումային ծրագրերը (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Արդեն տեղադրվել են 200-ից ավելի ներդրումային ծրագրեր: Բաժնում բացվել է «Սահմանապահ համայնքներ» ենթաբաժինը՝ ըստ մարզերի, և այնտեղ տեղադրվում են համայնքի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, հիմնախնդիրները և մինչ օրս իրականացված աշխատանքները:

4. Փետրվարի 9-10-ը ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպել է «Հայաստանում ներդրումներին՝ սփյուռքահայերի մասնակցությունը» և «Զբոսաշրջության զարգացումը Հայրենիքում և սփյուռքահայերի մասնակցությունը» կլոր սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ/ պատասխանատուներ, Հայաստանում ներդրումներ կատարած սփյուռքահայ գործարարներ, զբոսաշրջության ոլորտի ընկերություններ

Սփյուռքից և Հայաստանից, ինչպես նաև վերոհիշյալ ոլորտների հետ առնչվող ՀԿ ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուր քննարկմանը շուրջ 50 մարդ:

5. Տարվել են աշխատանքներ տարբեր երկրներում գործող հայկական առևտրաարդյունաբերական պալատների հետ՝ ներդրումների ներգրավման ուղղությամբ: Սփյուռքի գործարարներին ու առևտրաարդյունաբերական պալատներին են ուղարկվել Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը, ինչպես նաև նրանց տեղեկացվել է Հայաստանում ներդրումներ իրականացնելու բոլոր հարթակների մասին (ընդհանուր առմամբ 1200 գործարար):

6. Ապրիլի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է «Սփյուռքի զորակցությամբ» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցել են սփյուռքահայ հայտնի բարերարներ, գործարարներ և ներդրողներ:

7. Մայիսի 5-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը «Երևան Էքսպո» կենտրոնում կազմակերպել է Հայաստանում արդյունաբերության ոլորտում սփյուռքահայ ներդրողների արտադրանքների «Գործարար ու զորակցող Սփյուռք» խորագրով ցուցահանդես-վաճառքը, որի շրջանակներում իրենց արտադրանքներին են ներկայացրել սփյուռքահայերի կողմից հիմնված 23 ընկերություններ:

8. Հունիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել տեսաժողով Հայկական առևտրային ցանցի (ATN), «Բելգիա-Հայաստան», «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատների, ինչպես նաև կանադահայ, ամերիկահայ և ֆինլադահայ գործարարների հետ, որի շրջանակներում քննարկվել են հարցեր՝ կապված Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրի տարածման և ներդրումների ներգրավման ուղղությամբ:

9. Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակներում սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել Հայկական առևտրային ցանցի (ՀԱՑ) 3-րդ գործարար ֆորումը, իսկ սեպտեմբերի 20-ին՝ ՀԱՑ-ի 5-րդ ընդհանուր ժողովը: Միջոցառումներին մասնակցել է շուրջ 200 գործարար՝ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից, որոնց շրջանակներում քննարկվել են Հայաստանում ներդրումներ կատարելու հնարավորությունների, զբոսաշրջության զարգացման, նոր բիզնես գաղափարների իրագործման, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրների լուծման վերաբերյալ հարցեր:

10. ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվել են 30-ից ավելի հանդիպումներ սփյուռքահայ գործարարների հետ, որոնց ներկայացվել են Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը:

11. Դեկտեմբերի 1-ին Մարսելում կայացած Ֆրանս-հայկական առևտրի և արդյունաբերության պալատի հիմնադրման 25-ամյակի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ սփյուռքի նախարարի և 200-ից ավելի հայազգի գործարարների միջև,

որոնց, պալատի հետ համագործակցությամբ, տրամադրվել է Հայաստանի համար մշակված բիզնես ծրագրերը և ներդրումներին վերաբերող օրենսդրության մասին տեղեկություններ:

12. «Սփյուռքի ժամ» ծրագրի 5 հեռուստահաղորդումներով հեռարձակվել է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ներդրումային ծրագրերի մասին և ՀՀ սփյուռքի նախարարության կատարած աշխատանքները այդ ուղղությամբ, «Մերոնք» և «Հայկական հետք» հեռուստահաղորդումներով հեռարձակվել շուրջ 20 հաղորդումներ՝ նվիրված Հայաստանում ներդրումներ իրականացրած սփյուռքահայ գործարարներին:

13. Հանրայնացվել են Հայաստանում 20-ից ավելի փոքր և միջին ձեռնարկատիրություններ ստեղծած սփյուռքահայերի հաջողության պատմությունները:

4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական հիշողության ամրապնդմանն աջակցություն



1. Հունվարի 19-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ ԳԱԱ հայագիտական ինստիտուտների հետ կազմակերպել է «Հրանտ Դինք. 10 տարի անց» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին անվանի գիտնականներ, թուրքագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, լրագրողներ, մտավորականներ:

2. Հրատարակվել է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը փաստաթղթերում և լուսանկարներում» պատկերագիրքը: Պատկերագիրքը փաստաթղթերի և լուսանկարների միջոցով արտացոլում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հայաստանում և Սփյուռքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի, ՀՀ սփյուռքի նախարարության և 60-ից ավելի երկրներում ստեղծված տարածաշրջանային հանձնախմբերի կողմից իրականացված աշխատանքները:

3. ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով 2017 թվականի ընթացքում մի շարք գիտական հաստատությունների կողմից Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնք տպագրվել են:

4. Նախարարության պատվերով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից կազմվել և հրատարակվել է «Հայերեն-քրդերեն, քրդերեն-հայերեն» բառարանը:

5. Նախարարությունը աջակցել է հուլիսին «Վերադարձ» հիմնադրամի կազմակերպած «Նուբար» ազգագրական խմբի այցելությանը Արևմտյան Հայաստանի Կարս, Էրզրում, Խարբերդ, Քաղթա, Դիարբեքիր, Սիիր, Մուշ, Վան և Անի քաղաքներ, որտեղ ի թիվս մշակութային և համերգային միջոցառումների, տեղի է ունեցել նաև հանդիպում դավանափոխ հայության հետ:

6. Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի «Արտաքին քաղաքականության օրակարգի» թեմատիկ ուղղության շրջանակներում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության ճանաչում, ցեղասպանությունների կանխարգելում. քաղաքական և իրավական գործընթացները» նիստը, որին մասնակցել են անվանի գիտնականներ, վերլուծաբաններ, համահայկական կառույցների ներկայացուցիչներ Հայաստանից և Սփյուռքից:

Նիստին զեկուցումներով են հանդես եկել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը, Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանը, ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը, Զորյան ինստիտուտի նախագահ Գրեգ Սարգսյանը (Կանադա), ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդական, ի.գ. թ. Վլադիմիր Վարդանյանը ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանը (Արգենտինա):

7. Օժանդակություն է ցուցաբերվել Իսպանիայի 2 քաղաքներում և Արգենտինայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարների տեղադրմանը:

5. «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ձևավորում և զարգացում



2016 թվականի հոկտեմբերի 20-24-ը Հայաստանում և Արցախում կայացած Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովի մասնակիցների առաջարկով սկսվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժումը:

1. Սփյուռքյան լրատվամիջոցներում և

նախարարության կայքերում հրապարակվել է ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կոչը:

2. Պատրաստվել է շարժման խորհրդանիշը՝ Արցախի «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի պատկերով, շարժման վերաբերյալ տարածվել է տեղեկատվություն:

3. Նախարարության «Հայերն այսօր» (hayernaysor.am) էլեկտրոնային պարբերականում բացվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» խորագիր, որտեղ տեղադրվում է շարժման շրջանակներում իրականացված միջոցառումների մասին տեղեկատվություն:

4. Ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծվել է էջ՝ «What Are You Doing For Artsakh?» վերտառությամբ, որտեղ տեղադրվում են շարժման շրջանակներում տեղի ունեցող միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ (արդեն տեղադրված է 130-ից ավելի նյութ):

5. Սփյուռքյան շուրջ 40 լրատվամիջոցների առաջին էջերում բացվել են բաժիններ՝ շարժման խորհրդանիշով:

Արդյունքում՝

- Ուսումնասիրելով 2016 թվականի ընթացքում Սփյուռքի արձագանքները շարժմանը՝ Սփյուռքի նախարարությունը 2017 թվականը հռչակվել է «Արցախի տարի»: Հուլիս ամսին Արցախում կազմակերպվելու է «Ազատ Արցախ» փառատոնը, որի նախապատրաստական աշխատանքներն ավարտվել են: «Արցախի տարի» շարժման արդյունքում Սփյուռքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ:

Սփյուռքի առաջատար լրատվամիջոցների խմբագիրներն ու լրագրողները հանդես են եկել շարժմանը սատարելու հրապարակումներով, ելույթներ ունեցել տեղական լրատվամիջոցներով:

- Շարժմանն արդեն միացել են սփյուռքի բազմաթիվ համայնքային կառույցներ, դպրոցներ, մշակութային խմբեր և անհատներ՝ իրականացնելով տարաբնույթ միջոցառումներ:

- Շարժմանը դրական ազդակներ հաղորդող առաջին քայլերը Սփյուռքի դպրոցականների լուսանկարներն են՝ շարժման պաստառներով, որոնք տեղադրվում են նախարարության կայքերում և տարածվում սոցիալական ցանցերում: Չափազանց տպավորիչ են հատկապես երեխաների նախաձեռնությունները, Արցախի իրենց հասակակիցներին սատարելու նրանց գործնական քայլերը:

Առանձնանում են ներքոհիշյալ գործերը՝

- 2016թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի 19-րդ հեռուստամարաթոնն անցկացվել է «Իմ Արցախը» խորագրի ներքո: Համազգային դրամահավաքի արդյունքում հանգանակված գումարի հիմնական մասը նախատեսվել է

նպատակաուղղել Արցախի տուժած բնակավայրերի վերականգնմանը, խաղաղ բնակչության անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղված միջոցառումներին, ինչպես նաև Արցախի բազմազավակ ընտանիքների համար առանձնատների կառուցմանը:

- Ֆրանսիահայ հայրենադարձ Սիրան Միսակյան-Բասմաջյանը իր թոշակով պարբերաբար ծանրոցներ ուղարկում զինվորներին,

- Լիբանանի Կաթողիկե եկեղեցու Սուրբ Խաչ Հարպոյան վարժարանը ծրագրի խորհրդանիշով 2017 թվականի օրացույց է հրատարակել: Տարվա ընթացքում կազմակերպվելու են երեխաների ձեռքով պատրաստված քաղցրավենիքների ցուցահանդես-վաճառք, որի հասույթը փոխանցվելու է Արցախում սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների բաժիններ ունեցող դպրոցներին: «Քույր դպրոց» ծրագրով համագորակցություն է հաստատվել Սուրբ Խաչ Հարպոյան և Մարտակերտի թիվ 2 դպրոցների միջև: Ապրիլին Արցախի Մարտակերտի շրջանի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցիչները «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում վերապատրաստվել են Բեյրութի Սուրբ Խաչ Հարպոյան վարժարանում: Սեպտեմբերին «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում Բեյրութի Սուրբ Խաչ Հարպոյան վարժարանի մի խումբ ուսուցիչներ Լիբանանի «Չարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սևակ Հակոբյանի գլխավորությամբ այցելել են Մարտակերտի շրջանի թիվ 2 հիմնական դպրոց՝ հնարավորինս աջակցելու նպատակով՝ խորհուրդներով, փորձի փոխանակումով, լսել նաև նրանց առաջարկները:

- Երևանի «Հայ-ամերիկյան առողջության կենտրոնը» 4 օր Արցախում անվճար հետազոտություններ է իրականացրել,

- Գերմանիայի Բադեն Վյուրթենբերգ երկրամասի հայ համայնքի հոգևոր հովիվ Տեր Տիրատուր քահանա Սարգսյանը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով համայնքի կողմից Արցախի անապահով ընտանիքներին օգնություն է բերել՝ 26 տոննա սնունդ և հագուստ: Օգնությունը շարունակական է լինելու:

- Լիբանանի «Չարթոնք» օրաթերթի խմբագրակազմը միացել է շարժմանը և հրատարակել է Արցախին նվիրված ամանորյա Բացառիկ համար: Վաճառքից գոյացած հասույթով Հայոց բանակի զինվորների համար գնվել է ձմեռային տաք հագուստ, որը Սփյուռքի նախարարության միջոցով փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

- Քուվեյթի ազգային վարժարանը գրենական պիտույքներ է առաքել Արցախ: Աշխատանքները լինելու են շարունակական:

- Արգենտինահայ ճանաչված լրագրող Կլաուս Լանխե Հազարյանը միացել է շարժմանը և Արցախի մասին իսպաներեն տարաբնույթ տեղեկատվություն է տարածում, իր ստեղծած www.soyarmenio.com.ar («Ես հայ եմ») կայքում բացել է

«Արցախ» բաժինը: Ապրիլին նա այցելել է Հայաստան և Արցախ՝ տեղի հանրությունից հարցազրույցներ վերցնելու նպատակով:

- Մայիսի 1-ին Շվեյցարիայի Աեշ գյուղաքաղաքի ավստրիացի փիլիսոփա Ռուդոլֆ Շտայների անվան դպրոցում կայացած «Հայկական մշակույթի օր» խորագրով ամենամյա միջոցառմանը ներկայացվել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման վերաբերյալ տեղեկատվությունը:

- Բարսելոնայի հայկական մշակութային միության անդամները, մեկօրյա դպրոցի աշակերտները և «Հայորդիք» պարաֆմբի սաները միացել են շարժմանը, Միության անդամները ՀԲԸՄ միջոցով նյութական օժանդակություն են ցուցաբերել, Բարսելոնայում կազմակերպել են զորակցության հավաքներ:

- Շառլ Ազնավուրը ողջունել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժումը Շանսոնյեն, ծանոթանալով շարժման առաքելությանը և գաղափարին, այն ողջունելի քայլ է որակել՝ ընդգծելով. «Շնորհավորում եմ, որ Արցախին օգնելու համար այսպիսի շարժում է սկսվել, նմանօրինակ նախաձեռնությունները պետք է շատ լինեն»:

- ՀԲԸՄ-ի Արգենտինայի մասնաճյուղը միացել է «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը: Շարժման շրջանակներում մայիսի 4-ին Բուենոս Այրեսում, մայիսի 6-ին Կորդոբայում տեղի են ունեցել համերգներ: Երաժշտական կատարումներով հանդես են եկել «YANNI» նվագախմբի ջութակահար Սամվել Երվինյանը, արգենտինաբնակ երաժիշտ, ՀԲԸՄ-ի Արգենտինայի մասնաճյուղի պատվավոր անդամ Գագիկ Գասպարյանը, դաշնակահար Արմեն Կուզիկյանը, իսկ Կորդոբայում՝ հայկական պարերի կատարումներով նրանց է միացել «Արարատ» պարախումբը: Սեպտեմբերի 22-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Արգենտինայի ՀԲԸՄ-ի նախաձեռնությամբ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի է ունեցել համերգ, որի ընթացքում ամփոփվել է շարժման շրջանակներում Արգենտինայում կայացած 10 համերգների արդյունքները: Համերգաշարի ընթացքում հանգանակված գումարով գնվել է 300 երաժշտական գործիք, որից 150-ը սեպտեմբերի 26-ին տրամադրվել է Արցախի երաժշտական դպրոցներին, իսկ մնացած 150-ը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների երաժշտական դպրոցներին:

- «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժման շրջանակներում ՀԲԸՄ-ի Բուենոս Այրեսի մասնաճյուղը Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցին նվիրել է դաշնամուր:

- Հայոց բանակի 25-ամյակի կապակցությամբ, արձագանքելով ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կոչին, աշխարհի շուրջ 45 երկրներից ստացվել է ավելի քան 60 տեսաուղերձեր և շուրջ 600 նամակներ՝ ուղղված Պաշտպանության բանակին և հայ զինվորին: Դրանք տպագրվել են «Հայերն այսօր» և «Հայ զինվոր»

պարբերականներում, ապա առաքվել են զորամասեր: Դրանք մեծ ոգևորություն են առաջացրել զինվորների շրջանում:

- Էստոնիայի հայ համայնքը, արձագանքելով շարժմանը, արցախցի զոհված 4 զինվորականների ընտանիքներին է փոխանցում ամսական 200 եվրո:

- Լիբանանի Հայ Ավետարանական Կրթական Համադրող հանձնախումբը, ընդառաջելով ՀՀ սփյուռքի նախարարության «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» կոչին, պատրաստել «Արցախ, Մեր Հպարտություն Ես» խորագրով ձայնասկավառակ, որտեղ ներառվել են Արցախին նվիրված 14 երգեր: Ձայնասկավառակի վաճառքից գոյացած հասույթը տրամադրվելու է Հայ Ավետարանչական Ընկերակցության Արցախի «Շող» ծրագրին, որի նպատակն է բարելավել Շուշի մանուկների սոցիալական կյանքը:

- Միանալով «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը՝ Բեյրութի «Վահան Թեքեյան» միջնակարգ վարժարանում ապրիլի 8-ին կազմակերպվել է «Ազատ Արցախը սպասում է մեզ» խորագրով մշակութային միջոցառում:

- Հունիսի 17-ին Բեյրութի Հայ կաթողիկե «Սուրբ Խաչ-Հարպոյան» բարձրագույն վարժարանը կազմակերպել է մանկապարտեզի սաների մասնակցությամբ միջոցառում՝ նվիրված Արցախին:

- Հունիսի 28-ին «Թեքեյան» մշակութային միության Լիբանանի շրջանային վարչությունը կազմակերպել է Գայանե Դավթյանի նախաձեռնությամբ հրատարակված «Իմ Շուշի» պատկերագրքի շնորհանդեսը:

- Հուլիսի 7-ին «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում Երևան քաղաքի պատմության թանգարանում բացվել է լիբանանահայ նկարչուհի Լենա Այդընյանի նախաձեռնությամբ «4 սերունդ. վճռականության ոգին» խորագրով ցուցահանդես-վաճառքը, որի հասույթի մի մասը տրամադրվելու է Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին:

- Կանադայի հայ համայնքի 30 ներկայացուցիչները «Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վահագն Գարագաշյանի գլխավորությամբ այցելել են Արցախ՝ մասնակցելու Արցախի Հանրապետության անկախության հռչակման տոնական միջոցառումներին:

- Միանալով «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը՝ Ամմանի ազգային մարզական միության սկաուտական հանձնախումբը այս տարի բանակումն անցկացրել է «Արցախ-2017» խորագրով սեպտեմբերի 1-3-ը, հույս հայտնելով, որ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ուժով առավել կհզորանա Արցախը և կհաղթահարի բոլոր դժվարությունները:

- Ռուսաստանի Դաշնության Կամչատկայի հայ համայնքը 1 ԼԱՁ մակնիշի ավտոբուս է նվիրել Արցախի պաշտպանության բանակին:

6. Տարածաշրջանների կրթամշակութային կենտրոններում և համայնքային կառույցներում Շուշիի ազատագրմանը նվիրված իրականացվել են հետևյալ միջոցառումները:

- Մայիսի 8-ին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն Շուշիի ազատագրման 25-րդ տարելիցի կապակցությամբ հաղես է եկել հայտարարությամբ:
- Մայիսի 10-12-ը Շուշիի ազատագրման 25-ամյակի կապատցությամբ Մոնրեալում (Կանադա) տեղի է ունեցել դասախոսություններ՝ հայ վերլուծաբան, քաղաքագետ և լրագրող Թաթուլ Հակոբյանի ընթերցմամբ:
- Մայիսի 11-ին ՀՅԴ ԼԵՄ-ի «Դրօշակ» մասնաճյուղը «Յովհաննէս Պօղոսեան» սրահում (Լիբանան) կազմակերպել է Շուշիի ազատագրման և արցախյան ազատագրական պայքարին մասնակից լիբանանահայ ազատամարտիկ Վիգէն Զաքարեանի նահատակության 25-ամյակներին նվիրված միջոցառում:
- Մայիսի 9-ին Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոսության, հայ համայնքային կառույցների և ներկայացուցիչների կողմից Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ տեղի է ունեցել ծաղիկների զետեղման արարողություն՝ ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում և 1992թ. Շուշիի ազատագրման մարտերում զոհված մարտիկների:
- Լոս Անջելոսում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում կայացել է Շուշիի ազատագրման 25-ամյա հորելյանին նվիրված ցուցահանդես: Արարատ ցուցասրահի հետ գործակցությամբ ներկայացվել են հայ հայտնի գեղանկարիչների և քանդակագործների աշխատանքներ:

7. Հայոց բանակի 25-ամյակի կապակցությամբ, արձագանքելով ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կոչին, աշխարհի շուրջ 45 երկրներից ստացվել է ավելի քան 60 տեսաուղերձեր և շուրջ 600 նամակներ՝ ուղղված Պաշտպանության բանակին և հայ զինվորին: Դրանք տպագրվել են «Հայերն այսօր» և «Հայ զինվոր» պարբերականներում, ապա առաքվել են զորամասեր: Դրանք մեծ ոգևորություն են առաջացրել զինվորների շրջանում:

Երևանի կենտրոնական փողոցներում տեղադրվել են «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» վերնագրով պաստառներ:

Շարժումը գնալով ընդլայնվում է և լայնորեն տարածվել է Ռուսաստանում, Եվրոպայի մի շարք երկրներում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Լատինական Ամերիկայում, անգամ Սիրիայում:

6. Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում և մասնագիտական ներուժի օգտագործում՝ ՀՀ-ի և Արցախի տնտեսության զարգացման համար



1. Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողով

Մայիսյան հաղթական հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակի նախաշեմին 2017թ. սեպտեմբերի 18-20-ին Երևանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, անցկացվել է

«Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը:

Համաժողովը ՀՀ Նախագահի բարձր հովանու ներքո կազմակերպվել է ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների հետ համագործակցությամբ:

ՀՀ Նախագահի նստավայրում Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի ընթացքի քննարկման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որից 2-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, մյուսները՝ աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի:

Համաժողովի կազմակերպական աշխատանքների համակարգման նպատակով ընդունվել է ՀՀ վարչապետի «Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու մասին» 2017 թվականի հունիսի 20-ի N 592-Ա որոշումը:

Համաժողովին բացման խոսքով ելույթ է ունեցել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, այնուհետև հնչել է Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը, ԱՀ Նախագահ Բակո Սահակյանի ելույթը, իսկ վերջում՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնության խոսքը:

Համաժողովը անցկացվել 4 ուղղություններով՝ 16 նիստերի և 3 լիազումար նիստերի միջոցով: 4 թեմատիկ ուղղություններն են՝

- Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ
- ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում
- Արտաքին քաղաքականության օրակարգ

- Հայապահպանության հիմնախնդիրներ:

Համաժողովի 2-րդ լիազումար նիստում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը ելույթ է ունեցել «ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնադրույթները» թեմայով՝ ներկայացնելով Հայաստանի տնտեսության զարգացման ներկա ռազմավարությունը, բարեփոխումների ուղղությունները, այնուհետև ելույթ են ունեցել «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ալեքսանդր Խաչատրյանը և Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Ավակ Ավակյանը:

Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել 3 կլոր-սեղան քննարկում՝

- Համահայկական խորհրդի ձևավորումը
- Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակի տոնակատարությունների նախնական ծրագրի ներկայացում
- Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների նախնական ծրագրի ներկայացում:

Համաժողովի փակման լիազումար նիստում ելույթ է ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, այնուհետև թեմատիկ ուղղությունների պատասխանատու գերատեսչությունների ղեկավարները/կամ նրանց ներկայացուցիչները ամփոփել են համաժողովի՝ իրենց պատասխանատվության ներքո գտնվող ուղղությունների արդյունքները:

Համաժողովի ավարտին ընդունվել է հայտարարություն, որտեղ նշվել են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հիմնական ուղղությունները և ուղենշվել հետագա անելիքները:

Համաժողովի օրերին իրականացվել են նաև մի շարք մշակութային միջոցառումներ, մասնավորապես՝

- Համերգ՝ նվիրված Արաքս Մանսուրյանի ստեղծագործական գործունեության 50-ամյակին
- Համերգ՝ նվիրված «Ծագումով հայեր» հաղորդաշարի 10-ամյակին
- «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի մրցանակաբաշխություն-շքահանդես:

Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովին մասնակցել է 1837 հոգի 71 երկրից, ընդ որում՝ 1363-ը՝ Սփյուռքից:

Համաժողովին հիմնական զեկույցով հանդես է եկել **106** հոգի **17** երկրից, ընդ որում՝

- Լիազումար նիստեր - **14** հոգի
- Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ - **20** հոգի
- ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից մարտահրավերների պայմաններում - **28** հոգի
- Արտաքին քաղաքականության օրակարգ - **17** հոգի
- Հայապահպանության հիմնախնդիրներ - **27** հոգի:

Համաժողովին հարակից ելույթներով և հարցադրումներով հանդես է եկել 168 հոգի 26 երկրից:

Գործարկվել է համաժողովի կայքը՝ paf2017.am, որտեղ տեղադրվել են համաժողովի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ծրագիրը և այլ նյութեր:

Պատրաստվել է Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովի հարցադրումների վերաբերյալ տեղեկատվական փաթեթը՝ 6-րդ համաժողովի մասնակիցներին տրամադրելու համար:

Համաժողովի անցկացման վայրում գործել է մամուլի կենտրոն, որտեղ հարցազրույցներով և ելույթներով հանդես են եկել 10-յակ մարդիկ: Համաժողովի լուսաբանման համար հավատարմագրվել է 55 լրատվամիջոցի շուրջ 200 ներկայացուցիչներ: Համաժողովի մասնակցել են նաև Սփյուռքի հայկական ավելի քան 50 հայկական լրատվամիջոցի 90 լրագրող:

Հավաքվել են համաժողովին հնչած բոլոր զեկույցների և ելույթների էլեկտրոնային տարբերակները: Նամակներ են ուղարկվել բոլոր նրանց, ովքեր հնարավորություն չեն ունեցել ելույթով հանդես գալու, ուղարկելու իրենց ելույթները կամ հարցադրումները:

Համաժողովում հնչած կամ հետո ներկայացված բոլոր հարցադրումները վեր են հանվել, դաս-դասվել են ըստ ուղղությունների, պատրաստվել է ամփոփ փաստաթուղթ, այն ուղարկվել է ՀՀ վարչապետին, որպեսզի հանձնարարվի յուրաքանչյուր գերատեսչությանը՝ իր ուղղությամբ համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:

Համաժողովի հիմնական արդյունքներն ըստ թեմատիկ ուղղությունների՝

- **Արտաքին և ռազմաքաղաքական տեսանկյուն**

ա) Վերահաստատվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդունված Համահայկական Հռչակագրի պատմական նշանակությունն ու առաքելությունը ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու հատուցման հետագա գործընթացի շարունակականության իմաստով, որպես ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

բ) Վերահաստատվել է Սփյուռքի քաղաքական ու տնտեսական կարևոր մասնակցությունը (այդ թվում՝ լոբբիստական աշխատանքները) Արցախի հանրապետության զարգացմանը, նրա միջազգային ճանաչմանն ու առկա մարտահրավերների հաղթահարմանը, որոնք առանձնակի սրվել են 2016 թ. ապրիլյան առճակատումից հետո:

գ) Սիրիական հակամարտության հետևանքով ՀՀ-ում վերաբնակված սիրիահայության օժանդակության շարունակական ծրագրերի իրականացում, արդյունավետության բարձրացման հետևողական ջանքերի կիրառում, սիրիական հակամարտության վերաբերյալ ՀՀ դիրքորոշման վերահաստատում և հետպատերազմյան Սիրիայի վերականգնմանը ՀՀ գործուն մասնակցության հավաստում:

դ) «Ազգ-բանակ» հայեցակարգի համահայկական ձևաչափի, ինչպես նաև ՀՀ պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունների ներկայացում և քննարկում առկա տարածա-շրջանային մարտահրավերների պայմաններում ու համազգային արձագանքման, դերա-բաժանման ապահովում:

ե) Արտակարգ իրավիճակներում, հակահայկական քարոզչության պայմաններում ՀՀ-Սփյուռք միասնական փոխգործակցության մեխանիզմների ապահովման ուղղությամբ քննարկումների ծավալում, առաջադրանքների կազմում և ներկայացում:

զ) Համազգային քաղաքական նշանակություն ունեցող Համահայկական Խորհրդի ձևավորման գործնական քայլերի ձեռնարկում:

է) ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի բացման խոսքում և ՀՀ անկախության 26-րդ ամյակի կապակցության ՊՆ համալիրում Սփյուռքի ու ՀՀ ներկայա-ցուցիչների հետ հանդիպմանը ներկայացրեց ՀՀ առաջիկա տարիների և հաջորդ Համաժողովի գլխավոր աշխատանքային ուղղությունն ու քաղաքականությունը՝ հայրենադարձության գործընթացի ակտիվացում /մեկնարկ/ 2040 թ. ՀՀ բնակչությունը 4 մլն-ի հասցնելու նպատակով:

• **Տնտեսական բաղադրիչ**

ա) Վերահաստատվել է ՀՀ - Սփյուռք տնտեսական գործակցության հայանպաստ նշանակությունը, ներդրումային նոր ծրագրերի անհրաժեշտությունը, փոխադարձ հետաքրքրությունը և առաջնահերթ ոլորտները (տեխնոլոգիական, պաշտպանական և այլն), ընթացակարգերի հնարավորինս պարզեցումը: Ներկայացվել են հաջողված տնտեսական ձեռնարկները, հայկական առևտրային ցանցի և գործարար աշխարհի ներուժի ընդլայնման հրամայականները:

բ) Սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման, վերականգնողական ու անվտանգային մեխանիզմների քննարկում, իրականացված ու նախատեսվող ծրագրերի ներկայացում:

գ) Համաժողովի մասնակից գործարար հատվածի կողմից հետաքրքրություններ են դրսևորվել մի շարք ոլորտներում ներդրումների կատարելու առնչությամբ, ներկայացվել են 100-ից ավելի առաջարկ-փաթեթներ, որոնք պետական համապատասխան գերատեսչությունների կողմից կուսումնասիրվեն և ընթացք կստանան: Համաժողովին մասնակցել է Սփյուռքից ժամանած շուրջ 250 գործարար:

- **Հայապահպանություն**

ա) Համաժողովում ընդգծվեց արևելահայերենի ու արևմտահայերենի մերձեցման անհրաժեշտությունը, որի ուղղությամբ աշխատանքային հանձնարարականներն առկա են:

բ) Նոր մոդելի կրթական համակարգի, էլեկտրոնային շտեմարանների, համակարգչային դասընթացների, հեռավար ուսուցման ու համացանցի ներգրավմամբ կրթության անցման նպատակահարմարություն, գործող օրինակների փորձի համալիր ներդրում:

գ) Սփյուռքի հայկական եկեղեցական կառույցների ակտիվ ներգրավվածությունը իր կարևոր նպաստն է բերում աշխարհասփյուռ հայի ինքնության պահպանմանն՝ անկախ դավանանքի առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական ուղղվածությունից:

դ) Սփյուռքի պատմամշակութային ժառանգությունը, վտանգված հուշարձանները պահպանելն ու ներկայացնելը, երիտասարդության նոր սերնդի՝ համայնքնային կառույցներին աստիճանական ներգրավվելու գործընթացը:

Համաժողովի հիմնական ձեռքբերումները՝

- Համաժողովին Սփյուռքից մասնակցել է շուրջ 1400 հոգի 69 երկրից:
- Համահայկական խորհրդի ստեղծման և Հայաստան-Սփյուռք գործակցության հետագա զարգացման հարցերով աշխատանքային խմբի խորհրդակցության անցկացումը:
- Համաժողովի վերաբերյալ Սփյուռքում կազմակերպվել են մի շարք հավաք-հանդիպումներ, քննարկումներ (ԱՄՆ, Լիբանան, Հայաստան և այլն):
- Համաժողովը լուրջ հարթակ հանդիսացավ ոչ միայն Հայաստան-Սփյուռք, այլև Սփյուռք-Սփյուռք միջհամայնքային գործակցության զարգացման և ամրապնդման համար: Ձևավորվեցին հորիզոնական և ուղղահայաց նոր կապեր:
- Համաժողովը առաջին անգամ անցկացվել է գրեթե բոլոր գերատեսչությունների հետ համագործակցությամբ:

- Համաժողովի օրերին կազմակերպական աշխատանքներին առաջին ներագրավեցին ավելի քան 50 կամավորներ՝ հայաստանյան տարբեր բուհերից
- Համաժողովի լուսաբանման համար հավատարմագրվել է 30 օտարերկրյա լրատվամիջոցներ
- Համաժողովին առաջին անգամ մասնակցել են 16 երկրներից՝ Ալբանիա, Էստոնիա, Թաիլանդ, Իռլանդիա, Մալայզիա, Մակեդոնիա, Մարոկկո, Ճապոնիա, Մեքսիկա, Մյանմար, Մոլդովա, Նոր Զելանդիա, Չինաստան, Պորտուգալիա, Սինգապուր, Սուդան:

2. ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ առողջապահության նախարարության և «Ակցիա Առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության հետ համատեղ արդեն կազմակերպել է Սրտաբանության Եվրակովկասյան 5 համաժողովներ՝ 2007-2015 թվականներին: Համաժողովների նպատակն է հայտնաբերել և համախմբել աշխարհի հայ սրտաբանների ներուժը՝ հայ



ժողովրդի առողջության պահպանման և Հայաստանում բժշկագիտության զարգացման համար, նպաստել Հայաստանի և Սփյուռքի սրտաբանների համագործակցությանը, մասնագիտական որակների բարձրացմանն ու կատարելագործմանը, նորարարական փորձի փոխանակմանը, ինչպես նաև նոր որակ հաղորդել սրտաբանների հետագա համագործակցությանը: Սրտաբանության Եվրակովկասյան 6-րդ համաժողովը տեղի է ունեցել հոտեմբերի 13-14-ը Երևանում:



3. ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և աջակցությամբ Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցությունը (ՃՃՀԱ) ստեղծվել է 2009 թվականին:

3.1 ՃՃՀԱ-ն ներկայումս 12 երկրում ունի ներկայացուցչություններ: Հայկական սփյուռքում դրանք ընդլայնելու նպատակով տարվում են համապատասխան աշխատանքներ:

3.2 Ընկերակցությունը մշակել է 8 կետից բաղկացած գործողությունների փաթեթ: Այն հիմնված է ՃՃՀԱ 5 հիմնասյուների վրա, որոնց մասին հայտարարվել է 2015 թվականին կայացած Ճարտարապետների 3-րդ համահայկական համաժողովի ժամանակ, որպես ՃՃՀԱ գործունեության ուղեցույց: Փաթեթը ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ ուղարկվել է ավելի քան 50 երկրներում գործող ՀՀ


դեսպանություններ՝ նրանց միջոցով նոր անդամների ներգրավելու և տեղերում կառույցի ներկայացուցչություններ հիմնելու համար:

3.3 Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության, ԿԱՅԹ արվեստի զարգացման հիմնադրամի համագործակցությամբ մայիսի 5-ին Հայաստանի ճարտարապետների միությունում կազմակերպվել է «Պատմությունը ճարտարապետության և երաժշտության մեջ» բանախոսական-երաժշտական միջոցառումը՝ նվիրված ճարտարապետ Ռոմեո Ջուլիակյանի հիշատակին: Այս նախագիծը միջոցառումների շարք է, որի նպատակն է բացահայտել ազգային ինքնության նկարագիրը որպես տարբեր մշակութային ոլորտներում առկա ընդհանուր օրինաչափությունների հավաքական ու փոխկապակցված մի համակարգ:

3.4 Մայիսի 28-ին Նախագահի նստավայրում տեղի ունեցած Հանրապետության տոնի առթիվ պետական պարգևների և կոչումների շնորհման արարողության ժամանակ Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության (ՃՃՀԱ) համանախագահ Գոհար Թութունջյանը պարգևատրվել է Երախտագիտության ջրանշանով Հայրենիք-Սփյուռք կապերի խորացման և ընդլայնման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

3.5 Հունիսին Քաթարում ՃՃՀԱ տեղի ներկայացուցչության նախաձեռնությամբ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Քաթարի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Քաթարի հայ մասնագետների գործունեությունը և մասնագիտական ներուժը ի շահ հայրենիքի ծառայեցնելու հնարավորություններն ու ճանապարհները:

3.6 «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի «Հայ ճարտարապետներն աշխարհում» խորագրի ներքո հարցազրույցներ են կազմակերպվել Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության խորհրդի անդամների հետ:



4. Իրավաբանների համահայկական խորհրդաժողովը ստեղծվել է 2009 թվականի սեպտեմբերի 20-ին՝ իրավաբանների համահայկական առաջին համաժողովի արդյունքում: Մինչ օրս կազմակերպվել է իրավաբանների համահայկական 3 համաժողով:

Ներկայումս շարունակվում են աշխատանքներն Ավստրիայում և Բելգիայում Իրավաբանների հայկական ասոցիացիա հիմնելու ուղղությամբ:

2015 թվականին «Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» ՀԿ խորհրդին կից Հայոց ցեղասպանության իրավական թղթածրարն ամբողջականացնելու նպատակով ստեղծված գիտավերլուծական կենտրոնում

շարունակվում են քննարկվող հիմնախնդրի ուսումնասիրության և թղթածրարի նախապատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքները:

5. «Հայկական առևտրային ցանց» կազմակերպությունը ստեղծվել է 2011 թվականի ապրիլի 29-30-ը Երևանում կայացած իր առաջին հիմնադիր ժողովի շրջանակներում:

5.1 Կազմակերպությունը մասնաճյուղեր ունի ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Մերձավոր Արևելքում և Եվրոպայում: Աշխատանքներ են տարվում ցանցը ընդլայնելու ուղղությամբ: Աշխատանքների արդյունքում Պորտուգալիայում ստեղծվել է «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատ:

5.2 Հունիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել տեսաժողով Հայկական առևտրային ցանցի (ATN), «Բելգիա-Հայաստան», «Պորտուգալիա-Հայաստան» առևտրային պալատների ներկայացուցիչների և կանադահայ, ամերիկահայ և ֆինլանդահայ գործարարների հետ: ՀԱՅ-ի կողմից ներկայացվել է Հայաստանում ներդրումների իրականացման ուղղությամբ տարված աշխատանքները, որից հետո տեղի է ունեցել անդրադարձ Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

5.3 Հայ առևտրաարդյունաբերական ցանցի (ՀԱՑ) 3-րդ համաժողովը անցկացվել է սեպտեմբերի 20-ին Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի շրջանակներում:



6. Հայ բժիշկների տարբեր կառույցներ են գործում Հայաստանի և աշխարհի տարբեր երկրներում, բայց չկա ընդհանուր մի հարթակ, որի միջոցով հնարավոր լինի համակարգել աշխատանքները: Ելնելով այս և այլ առաջադրանքներից՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը աշխատանքներ է իրականացնում Հայ բժիշկների համահայկական ընկերակցություն ստեղծելու ուղղությամբ: Այս նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիայի, Հայաստանի երիտասարդ ակնաբույժների ասոցիացիայի ղեկավարների հետ, քննարկվել են հետագա անելիքները: Նախաձեռնությանը միացել են՝

- ВИВА. Врачи и Волонтеры-Армении (Մոսկվա, ՌԴ)
- Armenian medical scientific community (AMSC) (Մոսկվա, ՌԴ)
- «Մեծ Բրիտանիայի հայ բժիշկների ասոցիացիա» կազմակերպությունը
- «Ֆայդեք» հիմնադրամ (Արգենտինա)
- «Ստամբուլյան» հիմնադրամ (Լատինական Ամերիկայի երկրներ, լաբորատորիանների ցանց)

- PLAS (Արգենտինա):

6.1 Մարտի 20-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Լիբանանի հայ բժիշկների մասնագիտական կառույցների ներկայացուցիչների հետ տեսաժողով, որի ընթացքում քննարկվել են Հայ բժիշկների համահայկական ընկերակցության, հայ բժիշկների համահայկական հարթակ ստեղծելու հարցերը, ինչպես նաև Հայ բժիշկների 12-րդ համաժողովի հետ կապված հարցեր:

6.2 «Ֆայդեք» և «Ստամբուլյան» հիմնադրամների հիմնադիր նախագահ Դանիել Ստամբուլյանի նախաձեռնությամբ, ՀՀ սփյուռքի նախարարության գործուն աջակցությամբ մայիսի 31-ից հունիսի 2-ը Արգենտինայում կայացել է Հայ բժիշկների 12-րդ համաժողովը, որին մասնակցել են 660 բժիշկներ, բուժքույրեր և այլք՝ 10 երկրից: Հայաստանից համաժողովին մասնակցել է 40 հոգի՝ այդ թվում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և այլ պաշտոնատար անձինք:

6.3 Աշխատանքներ են տարվում Հունաստանի, Ռումինիայի Բուլղարիայի և Բելգիայի հայ համայնքների հետ՝ նշված երկրներում հայ բժիշկների ասոցիացիա հիմնելու ուղղությամբ:



7. ՀՀ սփյուռքի նախարարությունը ստեղծման օրվանից համագործակցում է լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ՝ մասնավորապես կազմակերպելով Լրագրողների համահայկական համաժողովները:

7.1 Փետրվարի 10-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող նիստ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում տնտեսական ներդրումների խրախուսման, «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման, ինչպես նաև օտարերկրյա լրագրողների այցելություններ Արցախ կազմակերպելու վերաբերյալ հարցեր:

7.2 Հունիսի 8-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող նիստ, որի ընթացքում քննարկվել են Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի լուսաբանմանն առնչվող հարցեր:

7.3 Դեկտեմբերի 11-ին Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության հետ համագործակցությամբ կայացել է Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող նիստ, որի ընթացքում քննարկվել են 2018 թվականին կայանալիք Լրագրողների համահայկական 9-րդ համաժողովի կազմակերպական հարցեր:

7.4 «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխության 2016 թվականի «Սփյուռքի լավագույն լրատվամիջոց» անվանակարգի մրցությանին հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության նախագահը: Փետրվարի 10-ին կայացած հանձնաժողովի ամփոփիչ նիստում որոշվել են մրցանակակիրները:

7.5 Լրատվամիջոցների ընկերակցության աջակցությամբ սփյուռքյան մամուլը տպագրում և տարածում է ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի մասին տեղեկատվություն:

Գերակա խնդիրներից բացի իրականացվել են հետևյալ աշխատանքները

7. «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոն



«Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնն անցկացվել է սեպտեմբերի 25-28-ը, Երևանում և ՀՀ մարզերում: «Երգում ենք Կոմիտաս» փառատոնն իրականացվում է 2013 թվականից 2 տարին մեկ անգամ՝ ծրագրում ներառելով Կոմիտասի խմբերգային, մեներգային և գործիքային ստեղծագործությունները: Այս տարի փառատոնի ծրագրում ընդգրկվել են նաև հայ այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

2017 թվականին «Երգում ենք Կոմիտաս» փառատոնի ծրագիրը հաստատվել է ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով:

Փառատոնին մասնակցել են շուրջ 280 կատարողներ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից: Սփյուռքի փառատոնին մասնակցել է 8 երգչախումբ և 12 անհատ կատարող աշխարհի 11 երկրից, ընդհանուր՝ 171 կատարող: Փառատոնին Հայաստանից մասնակցել է՝ 7 երգչախումբ և 2 անհատ կատարող:

Փառատոնի շրջանակներում կամակերպվել է նաև Ստամբուլի հայ համայնքի օրերը Հայաստանում, ինչպես նաև Արաքս Մանսուրյանի ստեղծագործական գործունեությանը նվիրված հորեյանական համերգ, որին մասնակցել են նաև ճանաչված երգչուհու այլազգի ուսանողները:

8. Համաժողովներ, գիտաժողովներ

8.1 «Լեհաստանի հայ համայնք. անցյալ և ներկա» խորագրով գիտաժողով

Հունիսի 9-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է «Լեհաստանի հայ համայնք. անցյալ և ներկա» խորագրով գիտաժողով՝ նվիրված Լեհաստանի հայ համայնքի 650 համայնքին, որին մասնակցել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի, Երևանի հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներ և այլք:

8.2 Սրտաբանության եվրակովկասյան 6-րդ համաժողով

ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության հետ համատեղ հոկտեմբերի 13-14-ը Երևանի «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնում անցկացրել է Սրտաբանության եվրակովկասյան 6-րդ համաժողովը, որին մասնակցել են հայազգի անվանի սրտաբաններ Հայաստանից, Արցախից և արտասահմանից՝ ընդհանուր առմամբ շուրջ 350 մարդ:

8.3 «Վենետիկի Մխիթարյան միաբանություն-300» խորագրով միջազգային գիտաժողով



Հոկտեմբերի 23-25-ը ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ ԳԱԱ հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի, Երևանի պետական համալսարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ իրականացվել են

Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյակին նվիրված միջոցառումներ:

Հոկտեմբերի 23-ին Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի և նախարարության նախաձեռնությամբ Մատենադարանում տեղի է ունեցել համատեղ ցուցահանդես՝ «Մխիթարյաններ. 300-ամյա պատմություն» խորագրով:

Հոկտեմբերի 24-25-ին տեղի է ունեցել «Վենետիկի Մխիթարյան միաբանություն-300» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով, որին մասնակցել են 50-ից ավելի զեկուցողներ:

8.4 Հայ ինքնության հիմնախնդիրներին նվիրված համաժողով

Դեկտեմբերի 21-ին կայացել է հայ ինքնության հիմնախնդիրներին նվիրված համաժողով, որին մասնակցել են հիմնախնդրով զբաղվող շուրջ երկու տասնյակ համահայկական կառույցների ներկայացուցիչներ, թուրքագետներ, ազգագրագետներ, ուսումնական և գիտական կենտրոնների ղեկավարներ:

9. Հայրենադարձության գործընթաց

ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Հայաստանում հաստատված շուրջ 60 հայրենադարձների հետ: Միջոցառման ընթացքում մասնակիցների կողմից ընդունվել է հայտարարություն և ազդարարվել «Հայաստանն է իմ տունը» շարժման մեկնարկը: Ստեղծվել է շարժման facebook-յան էջը, որտեղ տեղադրվում են հայրենադարձների հաջողված ձեռնարկումներին առնչվող նյութեր, հարցազրույցներ, տեսանյութեր, խմբի անդամները ներկայացնում իրենց խնդիրները:

Հայաստանի Հանրապետություն հայրենադարձության քաղաքականությունը պետության կողմից կիրառվող հայապահպանության, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և անվտանգության քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն է: Այս առումով շրջադարձային նշանակություն ունեցավ ՀՀ Նախագահի Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողովին հղած ուղերձը, որում նշվում էր.

- Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների տրամաբանության և դինամիկայի փոփոխությունը,
- Հայրենիք-Սփյուռք համագործակցությունը դիտարկել ուժեղ և զարգացած Հայաստան, անկախ և անվտանգ Արցախ, Սփյուռքի կազմակերպված համայնքներ ունենալու տեսլականով:
- Դեպի Հայաստան է պետք ուղղորդել սփյուռքի այն ներդրումային ուժը, որը ցանկանում է գործարարությամբ զբաղվել և շահույթ ստանալ՝ զուգահեռաբար շենացնելով մեր երկիրը, աշխատատեղեր ստեղծելով, աջակցելով սոցիալական կապիտալի զարգացմանը և ի վերջո՝ հայրենադարձությանը:
- Ժողովրդագրական միտումները երկրում խիստ մտահոգիչ են և առաջիկա բոլոր տարիների քայլերն ուղղվելու են ՀՀ-ում բնակչության բնական աճի տեմպերի ավելացմանը, արտագաղթի և ներգաղթի հարաբերակցության էապես վերափոխմանը: Նպատակն է, որպեսզի Հայաստանը 2040 թ. ունենա առնվազն 4 միլիոն բնակիչ, որը միայն ծնելիության մակարդակի ավելացման, մարդկանց կյանքի տևողության երկարացման և ժողովրդագրական պատկերը բարելավող մյուս քայլերով մենք այդ նպատակին դժվարությամբ կհասնենք: Հետևաբար

նպատակադրումը ենթադրում է գալիք 25 տարիների ընթացքում դեպի Հայաստան ներգաղթի լուրջ ցուցանիշների ձեռքբերում:

ՀՀ ժողովրդագրական խնդիրներին և դրա բարելավման հնարավորություններին նվիրված ՀՀ Նախագահի գլխավորությամբ նոյեմբերի 8-ին տեղի ունեցած հատուկ խորհրդակցության ժամանակ քննարկվել են ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող հիմնական գործոնները, նախանշվել են գերակայությունները, դրանց ներքո իրականացվելիք միջոցառումները, թիրախային նպատակներին հասնելու խնդիրները: ՀՀ կառավարությանը հանձնարարվել է մշակել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման՝ մինչև 2040 թվականի ռազմավարական հիմնադրույթները՝ հիմք ընդունելով Հայաստանի բնակչությունը 4 մլն հասցնելու համազգային նպատակը:

Ներկայումս նախարարությունը ակտիվորեն զբաղված է Հայրենադարձության ռազմավարության և «Հայրենադարձ» հիմնադրամի կանոնադրության, հայրենադարձության ծրագրերի մշակման աշխատանքներով, «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի լրամշակմամբ և այլն:

Սիյուռքում տարածվել են կոչեր. «Այցելություն 1-ին քրիստոնյա երկիր», «Այցելություն Նոյի երկիր», «3 տարին մեկ հանգստանալ Հայրենիքում», «Տուն գնիր Հայաստանում» և այլն:

2017 թվականին նախարարության պատվերով հեռարձակվող հեռուստահաղորդումների գլխավոր ուղղություններից մեկը եղել են Հայաստանում բնակություն հաստատած սիյուռքահայերը: Համագործակցելով Հ1 հեռուստաընկերության հետ, նկարահանվել է 20 հայրենադարձ երեխաներին նվիրված հաղորդում, որի ընթացքում նրանք պատմել են Հայաստանում հաստատվելու առավելությունների մասին:

10. Համահայկական կառույցների հետ համատեղ այլ աշխատանքների իրականացում

1. «ATP» ծրագրի շրջանակներում ապրիլի 22-ին Հաղարծին վանական համալիրի տարածքում կազմակերպվել է ծառատունկ: Միջոցառմանը մասնակցել են «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի անդամները և Հայաստանում հաստատված մի խումբ սիրիահայ բժիշկներ:

2. «Համաշխարհային հայկական կոնգրես» և «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպությունների հետ համատեղ երիտասարդության շրջանում հայոց լեզվի ուսուցմանն օժանդակման նպատակով մրցանակաբաշխության, օլիմպիադաների և

շարադրությունների 2017թ. մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է սփյուռքյան համայնքներին և կրթօջախներին:

3. Տպագրվել է 2016 թվականի դեկտեմբերին ՀՀ սփյուռքի նախարարության, Համազգային հայ կրթական և մշակութային միության և ԵՊՀ-ի համատեղ ջանքերով կայացած գրող, հրապարակախոս, քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանին նվիրված միջազգային գիտաժողովում հնչած ելույթների ժողովածուն:

4. Նախարարությունն աջակցել է հուլիսի 20-29-ը կայացած Համահայկական 10-րդ մարզախաղերին, որոնց մասնակցել են 1300 հոգի՝ աշխարհի 19 երկրից: ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 31-ի N 506-Ա «Հայ մարմնակրթական ընդհանուր միության 10-րդ համահայկական մարզախաղերը կազմակերպելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշման համաձայն հանձնաժողովի նախագահը եղել է ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

11. Տարածաշրջանային ծրագրեր

11.1 «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին (Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներ)» ծրագիր

Հուլիսի 26-ից օգոստոսի 7-ը կազմակերպվել է «Լույս» երգչախմբի այցը Ավստրալիայի Սիդնեյ քաղաք՝ համերգներով հանդես գալու, տեղի հայկական դպրոցներում և եկեղեցական երգչախմբերում երգի դասընթացներ անցկացնելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 22-30-ը կազմակերպվել է երգիչներ Սոֆի Մխեյանի և Արսեն Սաֆարյանի այցը Լատինական Ամերիկա: Երգիչները Բրազիլիայի Օզասկո քաղաքում մասնակցել և ելույթ են ունեցել Հայկական մշակութային 5-րդ փառատոնի համերգի ընթացքում, իսկ հոկտեմբերի 25-30-ը նրանք Օզասկոյից մեկնել են Բուենոս Այրես՝ «Բուենոս Այրես Սելեբրա» միջոցառմանը ելույթ ունենալու նպատակով:

Նախարարության աջակցությամբ Կանադայում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպված բարեգործական երեկոյի ընթացքում կայացել է երգիչներ Սոնա Ռուբենյանի և Սևակի Ամրոյանի համերգը:

2017 թվականի դեկտեմբերի 22-ից 2018 թվականի փետրվարի 15-ը Ազգային պարարվեստի գործիչ Գագիկ Գինոսյանի սաներից՝ պարուսույց Հովհաննես Դաշտոյանի գործուղվել է Բրազիլիայի Սան Պաուլո քաղաք՝ Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միությանը կից «Կիլիկիա» պարախմբի անդամներին վերապատրաստելու նպատակով:

11.2 «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» ծրագիր

1. «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» 2016թ. ծրագրի իրականացման արդյունքների ամփոփման նպատակով կազմակերպվել է կլոր սեղան, որի ընթացքում վերլուծվել են առկա խնդիրները և ամփոփվել են ծրագրի իրականացման արդյունքները: Ստացված համապատասխան տեղեկատվության հիման վրա կատարվել է «Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնի խնամքի և պահպանման» 2016թ. ծրագրի արդյունքների ամփոփում և առկա խնդիրների վերլուծություն:

2. «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել.

- Թբիլիսիի Աբ.Էջմիածին եկեղեցուն կից գործող «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնին
- Սամցխե-Ջավախքի և Ծալկայի փոխառաջնորդարանին կից կրթամշակութային կենտրոններին (Ախալքալաք, Նինոծմինդա, Ախալցխա)
- Տարածաշրջանի գործող երիտասարդական կենտրոնների գործունեությանը
- Կրթական, մշակութային և համայնքային կառույցների նյութատեխնիկական բազայի արդիականացմանը
- Հայալեզու թերթերին:

3. «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» և «Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը» 2017թ. ծրագրերը հաստատվել են ՀՀ սփյուռքի նախարարի համապատասխան հրամաններով, ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 7 լրատվամիջոցի գործունեությանը և 2 տարեգրքի տպագրմանը:

4. Մայիսի 4-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվել է «Հայկական պատմամշակութային արժեքները հարևան երկրներում և Մերձավոր Ասիայում» թեմայով քննարկում, որի գլխավոր բանախոսն էր Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի ղեկավար, հուշարձանագետ Սամվել Կարապետյանը:

5. Մայիսի 24-ին կազմակերպվել է թբիլիսահայ տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանի «Տիկնիկների աշխարհ» անհատական ցուցահանդեսը:

6. Վրաստանի հայալեզու հանրային և կիրականօրյա դպրոցներին տրամադրվել են մոտ 20 000 կտոր հայոց լեզվի և գրականության դասագրքեր և ուսումնաօժանդակ նյութեր:

11.3 «ԵԱՏՄ երկրների հայ համայնքների կրթամշակութային զարգացմանն աջակցություն» ծրագիր

Կատարվել են «Ասիայում» ամառային դպրոցի Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական կրթօջախներից 18 ուսուցիչների մասնակցության ծախսերը:

Եվրասիական տնտեսական միության երկրների հայկական համայնքներին տրամադրվել է «Արցախի հոգևոր գանձերը» գիրքը:

Կատարվել են «Երգում ենք Կոմիտաս» փառատոնին Ռուսաստանի Եկատերինբուրգ, Ստավրոպոլ և Ղազախստանի Աստանա քաղաքներից 3 երգիչների մասնակցության ծախսերը:

«Հայաստանի մշակույթի օրերը Ռուսաստանի Դաշնությունում» միջոցառումների շրջանակներում նոյեմբերի 23-27-ը Ռուսաստանի Մոսկվա, Տվեր, Ռժև և Կիմրի քաղաքներ է գործուղվել «Ծաղկազարդ» համույթը:

12. «Մեր մեծերը» ծրագիր

2017 թվականի «Մեր մեծերը» ծրագրում ընդգրկվել են **ամերիկահայ ռեժիսոր Ռուբեն Մամուլյանի, բանաստեղծ Վահան Թեքեյանի, նշանավոր գործարար ու բարեգործ Ալեքսանդր Մանթաշյանցի, կոմպոզիտոր, դիրիժոր, հայ ազգային օպերային արվեստի հիմնադիր Տիգրան Զուխաշյանի և ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու անունները, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան Միաբանությունը:**

Ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարությունը համագործակցում է ՀՀ պետական կառույցների, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, պաշտպանության, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ մարզապետարանների, ինչպես նաև համահայկական կառույցների ու Հայաստանի, Արցախի և Սփյուռքի կրթամշակութային հաստատությունների հետ:

Հայաստանի դպրոցներում, ինչպես նաև Արցախի և Սփյուռքի կրթօջախներում կազմակերպվել են շուրջ 100 մեծարման միջոցառումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են սփյուռքյան լրատվամիջոցներում, համայնքային կայքերում, «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում: Պատրաստվել և հրատարակվել է մեծերի կյանքին և գործունեությանը նվիրված գրքեր և տեսաերիզներ:

13. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից Հայրենիք-Սփյուռք գործակցության աշխատանքներում

13.1 «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական

Նախարարության կազմավորումից ի վեր ստեղծվել և թողարկվում է «Հայերն այսօր» www.hayernaysor.am ամենօրյա էլեկտրոնային պարբերականը 4 լեզվով՝

արևելահայերեն, արևմտահայերեն, ռուսերեն, անգլերեն:

«Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում 2017 թվականին հրատարակվել է 4233 նյութ, որից՝

- Նորություններ - 3906
- Հարցազրույց - 183
- Հոդված - 144:

«Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում բացվել է 3 նոր խորագիր՝ «Հաջողված պատմություններ», «Հայոց բանակ - 25» և «Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողով»:

Էլեկտրոնային պարբերականն օրական ունի շուրջ 3000 այցելու:

13.2 Արևմտահայերենից՝ արևելահայերեն և հակառակը փոխարկիչ

Շարունակվել են «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը» փոխվերծանող ծրագրի կատարելագործման ուղղությամբ և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Փոխարկչի գիտելիքների բազան հարստացվել է 4000 հասկացույթով:
- Փոխարկչի գիտելիքների բազայում կատարվել է 5800 կապերի ճշգրտում:
- Փոխարկչի բառարաններում ավելացվել է ավելի քան 31000 բառ 8 լեզվով:

13.3 Էլեկտրոնային գրադարան

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 10-ի N 211-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համացանցում առկա հայերեն գրականությունը և հայալեզու ուսումնական և գիտահանրամատչելի նյութերի քանակության բացը լրացնելու նպատակով մշակվել և գործարկվում է սփյուռքի նախարարության «Էլեկտրոնային գրադարան» նախագիծը (www.lib.mindiaspora.am): Գրադանում տեղադրվում են նաև ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, պատվերով և աջակցությամբ հրատարակվող գրքերը:

libmindiaspora.am կայքում թվայնացվել և տեղադրվել է մոտ 36 400 էջ նյութ, 124 ամբողջական գիրք, այդ թվում 2016 թվականին նախարարության պատվերով հրատարակված գրքերը:

13.4 Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարան

Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարանում (www.armdiasporamuseum.com) տեղադրվում են Սփյուռքի հայկական համայնքների,

համահայկական կազմակերպությունների ու հոգևոր կառույցների, Հայաստանի, Հայ դատի վերաբերյալ նյութեր, հայկական անձնանունների և ազգանունների բառարաններ, ներկայացվում է հայկական մշակութային ժառանգությունն ու նվաճումները, մեծանուն հայորդիների ներդրումները համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Թանգարանում տեղադրվել է շուրջ 450 նյութ և 500 լուսանկար:

13.5 Հայաստան-Սփյուռք թեմատիկ տեսակոնֆերանսների, համացանցային հեռարձակումների և ասուլիսների կազմակերպում

ՀՀ սփյուռքի նախարարության ղեկավարությանը և աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներին սփյուռքի համայնքների խնդիրներին անմիջական շփման միջոցով ծանոթացնելու նպատակով նախարարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ պարբերաբար հայ համայնքների ամենատարբեր կառույցների, դպրոցների և համայնքի ներկայացուցիչների հետ կազմակերպվում են տարբեր թեմաներով հեռավար տեսաժողովներ, տեսակոնֆերանսներ, խորհրդակցություններ:

2017 թվականին, ըստ նախապես հաստատված տարեկան ժամանակացույցի, կազմակերպվել է 19 տեսակոնֆերանս 18 երկրի (ԱՄՆ, Իրան, Քուվեյթ, Արգենտինա, Վրաստան, Ռուսաստան, Ղազախստան, Գերմանիա, Ֆրանսիա, Չեխիա, Լիբանան, Ֆինլանդիա, Պորտուգալիա, Բելգիա, Կանադա, Լիտվա, Էստոնիա, Իտալիա) հայ համայնքների ներկայացուցիչներ հետ:

Հեռակոնֆերանսների ընթացքում համայնքների կողմից բարձրացված հարցերը դուրս են բերվել, կազմվել է համապատասխան աշխատանքային-ծրագիր, որն իրականացվում է սահմանված ժամկետներում:

13.6 Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում - Էլեկտրոնային շտեմարան



Էլեկտրոնային շտեմարանը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N36 «Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման

մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծման ծրագրին և

միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման համաձայն: Էլեկտրոնային շտեմարանում մուտքագրվել է մոտ 6800 սփյուռքյան կառույցների և հայազգի հայտնի անհատների վերաբերյալ տեղեկատվություն: Շտեմարանում բացվել է «Հայրենադարձներ» բաժինը, որտեղ մուտքագրվում են 1991 թվականից սկսած Հայաստանում բնակություն հաստատած սփյուռքահայերի տվյալները:

14. Սփյուռքագիտական հետազոտությունների իրականացում

ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտներին, Երևանի պետական համալսարանին, Երևանի պետական լեզվաբանական համալսարանին, «Նորավանք» ԳԿՀ-ին, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամին և գիտական այլ հաստատություններին պարբերաբար տրամադրում է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող թեմատիկ հետազոտությունների պատվերներ:

Նախարարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 2017 թվականին տրամադրվել է 12 գիտական թեմայի պատվեր.

1. Ուրացման քաղաքականության արմատները, նորօրյա դրսևորումները և դրանց հետևանքները (Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամ),
2. «Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը (ԵՄ-երկրներ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)» (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ),
3. «Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
4. «Հայկական հարցը և սփյուռքահայությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը», (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ),
5. «Գրական Սփյուռք-2017», (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ),
6. «Արևմտահայերեն (կանոնակարգ և խնդիրներ) », (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ),
7. «Արևմտահայերենի արդի վիճակը հայկական գաղթօջախներում (Արևմտյան Եվրոպա)», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ,
8. «Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի պետական քաղաքականությունը «Սփյուռքի» նկատմամբ», («Նորավանք» ԳԿՀ),

9. «Լիբանանահայ համայնքը 1915-1990թթ.» (ըստ արխիվային փաստաթղթերի) (Հայաստանի ազգային արխիվ),

10. Հայկական Սփյուռքի հնարավորություններն ու ազդեցությունները Հայաստանի Հանրապետության սոցիալական, քաղաքական գործընթացների վրա (Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան):

11. Հայրենիք-Սփյուռք առընչությունները 21-րդ դարասկզբին 2001-2017թթ., (ԵՊՀ պատմության ֆակուլտետ)

12. Հայոց ցեղասպանության արձագանքներն Իտալիայում. 1915, (Վենետիկի Կա Տոսկարի համալսարանի հայագիտության ամբիոն)

Վերոնշյալ 10 հետազոտությունները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ սփյուռքի նախարարություն, իսկ վերջին 2 թեմաների ուսումնասիրության կատարման վերջնաժամկետը սահմանված կարգով և ներկայացված հիմնավորումների հիման վրա երկարացվել է մինչև 2018թ. առաջին եռամսյակ:

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել են նախարարության հովանավորությամբ և պատվերով հրատարակված 13 գրքերի շնորհանդեսներ: Ներկայացված գրքերը նվիրված են եղել հայ համայնքների պատմությանը, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին հայ կանանց դերին, Ցեղասպանության և հայոց լեզվի հիմնահարցերին, հայ պարբերական մամուլի պատմությանը, սիրիահայերի արդի իրավա-սոցիալական խնդիրներին, սփյուռքի ներդրումային ներուժին և այլն: Գրքերում արծարծված և վերհանված հիմնահարցերը ներառվում են նախարարության ոլորտային ծրագրերում:

15. Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հեռուստահաղորդումները և ֆիլմերը՝

- «Մերոնք» - 72 հեռուստահաղորդում (<1 հեռուստաընկերություն),
- «Սփյուռքի ժամ» - 40 հեռուստահաղորդում (<1 հեռուստաընկերություն),
- «Հայ սփյուռք» - 10 ֆիլմ (<1 հեռուստաընկերություն),
- «Հայկական հետք» - 20 հեռուստահաղորդում («Երկիր մեդիա» հեռուստաընկերություն),
- «Տոհմաձառ՝ «Նոր արմատներ» - 12 հեռուստահաղորդում («Արարատ» հեռուստաընկերություն),

- «Աշխարհասփյուռ» - 20 հեռուստահաղորդում («Արմենիա» հեռուստաընկերություն):

ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի ներկայացման և լուսաբանման նպատակով աջակցություն է ցուցաբերվել մի շարք լրատվամիջոցների՝

- «Գոլոս Արմենիի» թերթ
- «Կամուրջ» հանրային ռադիո
- «Ավանգարդ» թերթ
- aravot.am լրատվական կայք
- news.am լրատվական կայք
- tert.am լրատվական կայք:

16. «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման ծրագիր

«Հայկական սփյուռք» տարեգրքում ներառվում են տեղեկություններ Հայաստանում և Սփյուռքում համահայկական կազմակերպությունների, հոգևոր կառույցների, հայ համայնքների, ՀՀ պետական մարմինների և ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացված հիշարժան ծրագրերի և միջոցառումների, ՀՀ Նախագահի, ԼՂՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ՀՀ վարչապետի և այլ պետական այրերի՝ հայ համայնքներ կատարած այցելությունների, ինչպես նաև սփյուռքյան կառույցների ղեկավարների, ներկայացուցիչների ընդունելությունների, ստացած պարգևների մասին: Տարեգիրքը հրատարակվում է արևելահայերեն - ռուսերեն, արևմտահայերեն - անգլերեն տարբերակներով: Արդեն տպագրվել է «Հայկական սփյուռք 2016» տարեգիրքը:

17. 2017 թվականին իրականացված մշակութային միջոցառումները

- Հունվարի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակիցները՝ նախարար Հրանուշ Հակոբյանի գլխավորությամբ, այցելել են Եռաբլուր զինվորական պանթեոն և ծաղիկներ դրել արցախյան պատերազմում զոհ գնացած ազատամարտիկների շիրիմներին: Այնուհետև նախարարությունում տեղի է ունեցել Հայոց բանակի օրվան նվիրված հանդիսավոր ցերեկույթ՝ հայրենադարձ ազատամարտիկների, սփյուռքահայ ներկա զինձառայողների, պետական պաշտոնյաների, համահայկական կառույցների երևանյան գրասենյակների, ինչպես նաև սիրիահայերի աջակցության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Մարտի 14-ին տեղի է ունեցել ՀՀ սփյուռքի և ՀՀ մշակույթի նախարարությունների հովանավորությամբ հրատարակված էդիկ և Տաթևիկ Մինասյանների «Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին» և «Հայ հերոսուհի կանայք» գրքերի շնորհանդեսը:

- Մարտի 16-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում ՀՀ սփյուռքի և ՀՀ մշակույթի նախարարությունների աջակցությամբ, «Ստեղծիր քո տունը» ՀԿ-ի նախաձեռնությամբ և «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամի հովանավորությամբ տեղի է ունեցել միջազգային մրցույթների դափնեկիր, երգչուհի, երգահան Լիլիթ Յանի «Դասական երաժշտության երեկո» խորագրով համերգը:

- Մարտի 23-ին տեղի է ունեցել նախարարության հովանավորությամբ և պատվերով հրատարակված գրքերի շնորհանդեսը:

- Մարտի 29-ին Երևանի պատմության թանգարանում տեղի է ունեցել «ՎԵՐՍԿԻՊԵ. սիրիահայերի հաջողություններն ու ավանդը Հայաստանի ձեռնարկատիրության ոլորտում» գրքի շնորհանդեսը և համանուն լուսանկարների ցուցահանդեսը:

- Ապրիլի 7-ին բելգիահայ երգչուհի Նառա Նոյանը հանդես է եկել Գաֆէսճեան արվեստի կենտրոնում:

- Ապրիլի 7-ին՝ մայրության և գեղեցկության տոնի առթիվ, նախարարությունում տեղի է ունեցել Արցախյան ազատամարտին մասնակցած կանանց մեծարման միջոցառում, որին ներկա էին Արցախյան պատերազմում զոհված կին ազատամարտիկների մայրեր, պատերազմին մասնակցած «Անահիտ» դասակի կին մարտիկները, հայրենադարձ կանայք:

- Ապրիլի 12-ին Երևանի պետական համալսարանի և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետում կայացել է լիբանանահայ հրապարակախոս, գրականագետ, Միջազգային լրագրողների միության, Հայաստանի ժուռնալիստների միության, Լիբանանի արաբ մամլո ընկերակցության անդամ Պարույր Աղբաշյանի «Երեւանի պետական համալսարան (95 ամեակ). երախտաւոր դասախօսներ (դիմաքանդակային հպումներ)» խորագրով գրքի շնորհանդեսը:

- Ապրիլի 19-ին նախարարությունում տեղի է ունեցել Դոուն Անահիտ ՄակՔինի «Հարյուրամյա ճանապարհ: Հայկական ողիսական» գրքի շնորհանդեսը: Պարգևատրվել է նախարարության Երախտագիտության մեդալով:

- Ապրիլի 20-ին Երևանի «Մետաքսի ճանապարհ» հյուրանոցի սրահում տեղի է ունեցել հայկական ժողովրդական երգերի հեղինակ-կատարող Վիգեն Հովսեփյանի առաջին «Արձագանքներ» («Echoes») խորագրով ծայնասկավառակի շնորհանդեսը, որին մասնակցել են ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Արմեն Տեր-Կյուրեղյանը, «Pomegranate music»-ի հիմնադիր-տնօրեն Րաֆֆի Մենեշյանը, մտավորականներ, արվեստագետներ, հյուրեր:

- Ապրիլի 21-ին նախարարությունում տեղի է ունեցել «Պատմում են ցեղասպանությունը վերապրածների շառավիղները» խորագրով միջոցառումը:
- Ապրիլի 28-ին նախարարությունում տեղի է ունեցել «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի հիմնադիր նիստ՝ ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարների, փառատոնի գեղարվեստական խորհրդի, Ժյուրիի և լրագրողների մասնակցությամբ:
- Ապրիլի 28-ին «Հայաստանում կայացած սփյուռքահայ արվեստագետների հետ հանդիպումներ» ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում հայ մեծանուն արվեստագետ Տիգրան Մանսուրյանի հետ:
- Մայիսի 2-ին Երևանում մոսկովյան մշակութա-գործարարական «Մոսկվայի տուն» կենտրոնում տեղի է ունեցել Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ սփյուռքի նախարարության կողմից հայտարարված գիտական և ստեղծագործական լավագույն աշխատանքների «Մրցանակաբաշխություն 2016»-ի արդյունքների ամփոփման և դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:
- Մայիսի 3-ին ՀՀ սփյուռքի նախարարն ընդունել է շվեդահայ ճանաչված գրող, կինոգործիչ Սյուզան Խարդալյանին: Սյուզան Խարդալյանը կրթությամբ լրագրող է, սովորել է Բեյրութի ու Փարիզի համալսարաններում: Նա ավելի քան 3 տասնյակ ֆիլմերի հեղինակ է, այդ թվում՝ «Ատում եմ շներին», «Երիտասարդ Ֆրոյդը Գազայից», «Մեծ մորս դաջվածքները», «Վերադարձ դեպի Արարատ»:
- Մայիսի 6-ին Հանքավանի «Նաիրի սպա ռեզորթ» հյուրանոցային համալիրի տարածքում ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունների նախաձեռնությամբ մեկնարկած «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի շրջանակներում կայացել է «Նաիրի» երաժշտական այգու հիմնադրման հանդիսավոր արարողությունը:
- Մայիսի 16-ին ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ «Շարմ Հոլդինգ» ընկերությունը կազմակերպել է «Կյանք ու կոիվ 2. 25 տարի անց» ֆիլմի դիտումը սփյուռքահայ ուսանողների, սիրիահայ հայրենադարձ ընտանիքների համար:
- Մայիսի 23-ին ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի աջակցությամբ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կազմակերպել է դասական երաժշտության համերգ՝ նվիրված Լեհահայ համայնքի կազմավորման 650-ամյակին:
- Հունիսի 2-ին «Պատասխան՝ 100 տարի անց» ծրագրի նախաձեռնությամբ ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունների աջակցությամբ «Սինեմա սթար» կինոթատրոնում տեղի է ունեցել պոլսահայ երգչուհի Սիպիլի և "The beautified project" ռոք խմբի հիմնադիր և մենեջեր Անդրե Սիմոնյանի «Քեզ եմ երգելու» երգի տեսահոլովակի շնորհանդեսը:
- Հունիսի 10-ին Երևան քաղաքի Մոսկվայի տանը ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանում ՌԴ դեսպանատան աջակցությամբ կայացել է Ռուսաստանի օրվան

նվիրված «Սիրով Հայաստանին ու Ռուսաստանին» խորագրով ցուցահանդեսի բացումը:

- Հունիսի 12-ին տեղի է ունեցել կանադահայ աշխարհահռչակ օպերային երգչուհի, Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնի մենակատար Իզաբել Բայրաքդարյանի պատվին ընդունելություն ՀՀ սփյուռքի նախարարությունում:

- Հունիսի 15-ին նախարարության նախաձեռնությամբ տեղի է ունեցել լոնդոնաբնակ հեքիաթագիր Նունե Սարգսյանի հեքիաթների մատենաշարի շնորհանդեսը:

- Հունիսի 26-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀԲԸՄ հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ՀԲԸՄ Հալեպի Մ.Սարյանի անվան ակադեմիայի տնօրեն Հրազդան Թոքմաջյանի կողմից կազմած «Անապատի տխուր մեղեդին. պետուին հայերը Նուրհան Պալեանի լուսանկարներում» եռալեզու պատկերագրքի շնորհանդեսը:

- Հունիսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ նախարարությունում տեղի է ունեցել լիբանանահայ լուսանկարիչ Գաբրիել Փանոսյանի «Լույսը խավարում» պատկերագրքի շնորհանդեսը:

- Հուլիսի 5-ին Լիբանանի «Զարթոնք» օրաթերթի նախաձեռնությամբ և ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ Երևանի Թեքեյան Կենտրոնի դահլիճում տեղի է ունեցել Թեքեյան մշակութային միության հիմնադիրների մարմնի ատենապետ, Ճարտարապետ Հակոբ Գասարճյանի «Նուիրում ՌԱԿ-ի Ճամբով Յիսնամեսյ գործունեության Արձանագրություն» գրքի շնորհանդեսը:

- Հուլիսի 6-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի է ունեցել «Հայկական երաժշտությունը լիբանանյան կատարմամբ» խորագրով համերգը՝ նվիրված «Թեքեյան» մշակութային միությունների հիմնադիր մարմնի 70-ամյակին: Համերգը կազմակերպվել է ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունների հովանավորությամբ և Լիբանանում ՀՀ դեսպանության հետ համագործակցությամբ:

- Հուլիսի 7-ին ՀՀ սփյուռքի նախարարության հովանավորությամբ և Լիբանանում ՀՀ դեսպանության հետ համագործակցությամբ անցկացվող «Թեքեյան» մշակութային միությունների հիմնադիր մարմնի 70-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում լիբանանահայ նկարչուհի Լենա Այդընյանի նախաձեռնությամբ Երևանի պատմության թանգարանում բացվել է «4 սերունդներ. վճռականության ոգին» խորագրով ցուցահանդես-վաճառքը:

- Աջակցություն է ցուցաբերվել Հուլիսի 22-ին Երևանում մեկնարկած Հայ մարմնակրթական ընդհանուր միության 10-րդ համահայկական մարզախաղերի կազմակերպմանը:

- Հուլիսի 28-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունների և Լիբանանում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ տեղի է

ունեցել լիբանանահայ ասմունքող, «Արարատ» օրաթերթի գլխավոր խմբագիր, «Նոր սերունդ» մշակութային միության ատենապետ Անի Սարաֆյան-Եփրեմյանի «Իմ երազը» խորագրով ասմունքի երեկոն:

- Օգոստոսի 3-ին ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ Ժամանակակից արվեստի թանգարանում տեղի է ունեցել կանադահայ քանդակագործ Մկրտիչ Տարագճյանի քանդակների ցուցահանդեսի բացումը:

- Սեպտեմբերի 1-ին նախարարության աջակցությամբ տեղի է ունեցել ամերիկաբնակ պոլսահայ մտավորական Գևորգ Հակոբյանի «Պատմութիւն իսթամպուլահայ ուսումնական կեանքի և կրթական հաստատութիւններու» գրքի շնորհանդեսը:

- Սեպտեմբերի 1-ին նախարարության նախաձեռնությամբ «Ստամբուլի հայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում կայացել է Ստամբուլի Սրբոց Վարդանանց եկեղեցու երգչախմբի համերգը՝ նվիրված Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյակին:

- Սեպտեմբերի 7-ին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, Մաշտոցի անվան Մատենադարանի և Թեհրանի Փերիո Կրթասիրաց միության հետ համագործակցությամբ Մատենադարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել Ստեփանոս Երեց Հազարջրիբեցու (18-րդ դար) «Հանգիտագրքի» շնորհանդեսը:

- Սեպտեմբերի 16-ին Հանքավանի «Նաիրի սպա ռեզորթ» հյուրանոցային համալիրի տարածքում ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունների նախաձեռնությամբ մեկնարկած «Նաիրի» համահայկական երաժշտական փառատոնի շրջանակներում «Նաիրի» երաժշտական այգում հանդիսավորությամբ բացվել են հայ երաժշտությունը, նվագարանները, երգարվեստը խորհրդանշող բրոնզաձույլ պատկերաքանդակներով արձանները:

- Սեպտեմբերի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովի պատգամավոր, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Բերիո Հայոց թեմի Ազգային առաջնորդարանի խոսնակ Ժիրայր Ռեիսյանի «100 նուիրեալներ Յեղասպանութեան օրերուն հայ ժողովուրդի օտարազգի բարեկամներէն» գրքի շնորհանդեսը:

- Հոկտեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում Գիտությունների ազգային ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ և ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ տեղի է Հրանուշ Հակոբյանի «Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում» մենագրության շնորհանդեսը:

- Հոկտեմբերի 9-ին մեկնարկել է սփյուռքի հայագիր և օտարագիր գրողների «Ժամանակակից հայ գրողն ու գրականությունը 21-րդ դարի մարտահրավերների առջև» խորագրով 6-րդ համաժողովը:

- Հոկտեմբերի 27-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և Հայաստանի գրողների միության աջակցությամբ տեղի է ունեցել ամերիկահայ մանկագիր, երգահան, տիկնիկագործ Ֆիրա Ակյանի ստեղծագործական գործունեության 50-ամյակին նվիրված ցերեկույթ:

- Նոյեմբերի 14-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել «Երիտասարդ ընտանիքի Աստվածաշունչը» գրքի շնորհանդեսը: Գիրքը Հայաստան է բերվել սիրիահայ ընտանիքներին բաժանելու համար: Միջոցառմանը ներկա էին գրքի հայերեն տարբերակի հեղինակներ Արաբական Ծոցի Աստվածաշնչային ընկերության ընդհանուր քարտուղար դոկտոր Հրայր Ճեպեճյանը, դոկտոր Արտա Ճեպեճյանը և այլք:

- Նոյեմբերի 24-ին «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում կայացել է արցախյան պատերազմի զոհերին և նրանց ծնողներին նվիրված «Կարոտի կանչով հերոսներիս հետ» խորագրով համերգը, որին ՀՀ սփյուռքի նախարարությունը ցուցաբերել է տեղեկատվական աջակցություն:

- ՀՀ սփյուռքի նախարարության և Բեյրութի Հայկազյան համալսարանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 13-ին նախարարությունում տեղի է ունեցել Հայկազյան հայագիտական հանդեսի 37-րդ հատորի շնորհանդեսը:

Նախարարությունը աջակցել է Ռուսաստանում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակներում Ռուսաստանի 70 հայ համայնքներում շուրջ 270 միջոցառումների կազմակերպմանը:

18. Իրավական ակտերի ընդունում

Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ ընդունվել է 20 նորմատիվ իրավական ակտ, որից՝

- ՀՀ կառավարության որոշում - 13
- ՀՀ կառավարության արձանագրային որոշում - 2
- ՀՀ վարչապետի որոշում - 4
- ՀՀ սփյուռքի նախարարի նորմատիվ հրաման - 1:

Առաջարկություններ և դիտողություններ հայտնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և հանրապետական գործադիր մարմինների կողմից ՀՀ սփյուռքի նախարարությանը ներկայացվել են 96 իրավական ակտերի նախագծեր, որոնց տրվել է համապատասխան ընթացք: 62 ակտերի վերաբերյալ

ներկայացվել են առաջարկություններ՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Տարբեր բնագավառներում սփյուռքի հայ համայնքների հետ համակողմանի կապերի զարգացման, հայապահպանության օժանդակման նպատակով ՀՀ սփյուռքի նախարարը ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի ՀՀ մշակույթի նախարարների հետ ստորագրել է 5 երկկողմ համատեղ հրաման:

ՀՀ սփյուռքի նախարարության գործառույթներին վերաբերող ՀՀ վարչապետի 56 հանձնարարական կատարվել է առանց թերությունների և ժամկետից շուտ:

2017 թվականին ընդունվել է ՀՀ սփյուռքի նախարարի 504 և նախարարության աշխատակազմի ղեկավարի 251 հրաման:

19. Գործուղումներ

Բազմաբնույթ խնդիրների լուծման, փոխճանաչման, կապերի հաստատման, ծրագրերի քննարկման, տարբեր միջոցառումների իրականացման նպատակով նախարարության աշխատակիցները գործուղումների են մեկնել 14 երկիր: Ընդհանուր առմամբ աշխատակիցների մասնակցությամբ եղել է 25 գործուղում, որից 6-ը՝ ՀՀ սփյուռքի նախարարը:

20. Ուսանողների պրակտիկայի կազմակերպում

Նախարարությունում ուսումնական պրակտիկա է անցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բուհերի 77 ուսանող, որից՝

- Երևանի պետական համալսարան - 45
- ՀՀ պետական կառավարման ակադեմիա - 5
- Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա - 5
- Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ - 12
- Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան - 9
- Հայաստանի ամերիկյան համալսարան - 1:

21. Պարգևներ

Հայապահպանության, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում նշանակալի ավանդի համար 54 սփյուռքահայ արժանացել են Հայաստանի Հանրապետության պետական պարգևների:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման տարբեր բնագավառներում ծրագրեր իրականացնելու, դրանց աջակցելու, գործակցության հետագա զարգացմանը նպաստելու, հայապահպանությանն օժանդակելու գործում անհատներին ու կազմակերպություններին շնորհվել են ՀՀ սփյուռքի նախարարության մեդալներ, պատվոգրեր, շներհակալագրեր:

22. ՀՀ սփյուռքի նախարարության տեղեկատվական քաղաքականությունը Հրապարակումներ

Պատրաստվել և տարածվել է 493 մամուլի հաղորդագրություն: Հայաստանի և Սփյուռքի տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում հրապարակվել է ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությանը վերաբերող 3300 նյութ, որից

- հայաստանյան լրատվամիջոցներ - 1780 նյութ,
- սփյուռքյան լրատվամիջոցներ - 1473 նյութ,
- օտար լրատվամիջոցներ - 47 նյութ:

Կազմակերպվել է 745 հեռուստատեսային և 310 ռադիո ռեպորտաժ, 171 տաղավարային հաղորդում:

Կազմակերպվել է ՀՀ սփյուռքի նախարարի 48 հարցազրույց և 59 ճեպագրույց:

Նախարարության գործունեությունը լուսաբանելու նպատակով հավատարմագրվել է 10 հայաստանյան լրատվամիջոցի 42 լրագրող:

Տեղեկատվության տրամադրում

Տարբեր կառույցներից և անհատներից ստացվել է 53 տեղեկատվության հարցում: Բոլոր հարցումներին սահմանված ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

Մամուլի ասուլիսների կազմակերպում

Կազմակերպվել է նախարարության աշխատակիցների 8 մամուլի ասուլիս:

Նախարարին կից հասարակական խորհուրդ

Տեղի են ունեցել ՀՀ սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի 4 նիստեր, որոնց ժամանակ քննարկվել են ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերը և ներկայացվել են ձեռք բերված արդյունքները:

23. Փաստաթղթաշրջանառություն, քաղաքացիների ընդունելություն

ՀՀ սփյուռքի նախարարությունում 2017 թվականին շրջանառվել է 140.249 գրություն-նամակ: Նախարարության էլեկտրոնային փոստով ստացվել է 22.404 նամակ, ուղարկվել՝ 111.859:

Նախարարության կողմից առաքվել է պաշտոնական 2.910 գրություն: Նախարարությունը ստացել է 3.076 գրություն, որից 655-ը՝ քաղաքացու դիմում:

Նախարարություն է այցելել 3.727 քաղաքացի, որից 965-ին ընդունել է ՀՀ սփյուռքի նախարարը:

Նախարարության կողմից առաքվել է 83 շնորհակալական և 115 շնորհավորական նամակ: Նախարարությունը ստացել է 114 շնորհակալական և 224 շնորհավորական նամակ: